



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material



L 44

---

535, 543, 544, 545,  
546

№ 951.

и 5

и 3

№ 873-3



18546

(10800-57)



546-2009

ԼԱՎ  
546

ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹԻՒՆ

ՍՐԲՈՅՆ ԲԱՐԴՈՂՈՄԷՈՍԻ

Ա. Ռ. Ա. Ք. Ե. Լ. Ո. Յ.

ԵՒ Ս. ՈՍԿԵԱՆՑ ԵՒ ՍՈՒՔԻԱՍԱՆՑ



Ի ՎԵՆԵՏԻԿ

Ի Տպարանի Մխիթարեանց

Ռ Ե Գ - 1854





# ՎԿԱՅՈՒԹԻՒՆ

## ՍՐԲՈՅ ԱՌԱՔԵԼՈՅՆ

### ԲԱՐԴՈՂՈՄԷՈՍԻ



ԳԼԽԱՒՈՐՔ սրբոց առաքելոցն ,  
երկոտասան աշակերտքն , վիճակե-  
ցան յազգս ազգս՝ յիջանելն ՚ի նո-  
սա Հոգւոյն սրբոյ ՚ի վերնատանն ,  
երկնագործել տարբերութեամբ լե-  
զուացն հրեղինաց ՚ի ձայն հոգմոյ .  
և ընկալան ձեռնագրութիւն երի-  
ցութեան , առեալ իշխանութիւն  
զմեզս թողուլ և ունել , և առնել  
նշանս և արուեստս . և շնորհել լու-  
ծումն ախտից , և բարձումն ցաւոց ,  
և հալածումն սատանայի , և քակ-  
տումն ՚ի մեղաց և ազատութիւն ՚ի  
ծառայութենէ ապականութեան՝  
յազատութիւն փառաց որդւոյն

Աստուծոյ , և գնալ 'ի պատուիրանս նորա , և արժանի լինել խոստացելոց պարգեւացն , և որ անդ են բարութիւնքն : Եւ ըստ առաջնորդելոյ Հոգւոյն սրբոյ՝ ափուեցան գնացին յազգս ընդհանուր լեզուաց քարոզել զբանն կենաց , և լուսաւորել զնոսա ծննդեամբ սուրբ աւազանին , և վերակացութեամբ Հոգւոյն սրբոյ արարչական զօրութեամբ :

Գնաց և երանելի առաքեալն Բարթողիմէոս , որ էր մի յերկոտասանիցն , երթեալ մտանէ յիւր վիճակ առաքելական ընտրութեանն . և 'ի սկզբան քարոզութեանն իւրոյ՝ եղեւ մտանել նմա 'ի քաղաքն Եդեմ՝ կոչեցեալ մերձ 'ի սահմանս Հնդկաց ընդ Թովմայի առաքելոյ . և անցեալ ընդ շինամէջ քաղաքին նստաւ առ աղբիւր մի , յորում ազգմունք դիւթականք հմայեալ կատարէին . յայտնութիւնք դիւաց 'ի բաշաղանս պատիր խաբէութեան մոլար պաշտաման . ձայնեալ յաղբերն իբրեւ աստու-

ծոյ ումեմն , յորում տեղւոջ բա-  
 զում նուէրք և զոհք մատչէին յա-  
 նուն աղբերն : Ուստի առասպելա-  
 բանելով իբրեւ այն թէ ինքնիշխա-  
 նութեամբ ունիցի զբղխումն , և  
 ընու սնուցողական զօրութեամբ ,  
 բուսոց և անկոց , և սերմանց , և  
 ազգի ազգի ծառոց և զանազան  
 ծաղկանց , համովք և հոտովք , և  
 անուանէին զանուն աղբերն դուս-  
 արը Նեղոսի : Եւ իբրեւ օր մի լինէր  
 յորում բազմութիւն քաղաքին հա-  
 սանէր 'ի զոհել , և ընծայել ծախս  
 ոսկւոյ և արծաթոյ , և ականց պա-  
 տուականաց , և հանդերձս մեծա-  
 գինս և պատուականս , և դիւացն  
 բարբառ արձակեալ ընդ ակն աղ-  
 բերն և պղպջակաձեւ զջուրն 'ի վեր  
 մղելով յեռանդն հրոյ բարկու-  
 թեան հողմոյ սաստիկ հնչմամբ ահ  
 արկանելով լսողացն և տեսողացն ,  
 'ի փայլելն հրոյ և 'ի հնչիւն հողմոյ .  
 և 'ի լինել արհաւրաց զաղաղակ  
 բարձեալ մեծաձայն և ուժգին  
 գոչմամբ կարգային զանուն աղ-  
 բերն իբրեւ զաստուած՝ որ կարիցէ

օգնել և սարգեւս ընդունել 'ի նմա-  
 նէ : Իսկ սուրբ առաքեալն կայր  
 հիացեալ և զարմացեալ ընդ միտս  
 իւր մեծաւ տրտմութեամբ ըմբռ-  
 նեալ վասն մուրումութեան նոցա և  
 աղտեղի գործոյն , զուր աշխատու-  
 թեանցն և անուղայ գնացիցն , և  
 անօգուտ ծախիցն և տարապարտ  
 աղաղակին . զի ժողորեալ հուռնեալ  
 էին արք և կանայքն իբրեւ զճճիս  
 և զզազրատեսիլ զեռունս 'ի տըղ-  
 մուտ վայրս կայտուեալ խըրտէին 'ի  
 պատիւ աղբերն , 'ի պատրանս դի-  
 ւաց կեղծաւորութեան : Յայնժամ  
 երանելի առաքեալն դիմեաց 'ի մէջ  
 նոցա 'ի վերայ աղբերն , և հանեալ  
 զաղաբողոնն՝ զոր արկեալ ունէր  
 զինքեամբ , սարղեալ ձգեաց ընդդէմ  
 ջրոյն , և կարդաց յանուն տեառն  
 Յիսուսի Քրիստոսի , և ասէր 'ի ձայն  
 մեծ . Զուրս այս ցամաքելով ցա-  
 մաքեսցի , և մի ամենեւին կացցէ  
 ունել ոյժ խոնաւութեան . և առ-  
 ժամայն ցամաքեցաւ վտակն յորդա-  
 հոս ջրոյն և եղեւ իբրեւ զվէմ ա-  
 պառաժ , և ձայն որոտման հրոյն ,

և փայլիւն կերպարանեալ հողմոյն 'ի  
 ձեւ լուսոյ, կորեաւ և դադարեաց :  
 Եւ դեւքն զաղաղակ հարեալ, ճիչ  
 բարձին մեծակական ողբովք հա-  
 ռաչէին և ասէին . Ո՛վ Յիսուս նա-  
 զովրեցի, մինչեւ յերբ շտապ տագ-  
 նապի հասուցանես 'ի վերայ մեր,  
 և ոչ տաս կալ մնալ յանդունդս  
 ջրոց, և 'ի տեղւոջ բնակութեան  
 մերոյ . յամենայն յերկրէ հալածա-  
 կանս արարեր զմեզ խաչիւ քով, և  
 այժմ 'ի ձեռս աշակերտաց քոց  
 նեղեալ հալածես, և չարչարես և  
 վտանգես յառաջ քան զժամա-  
 նակն՝ որ գալոց է 'ի վերայ մեր :  
 Յայնժամ սուրբ առաքեալն սաս-  
 տեալ 'ի նոսա ասէ . Ով պիղծք,  
 դժնեայք և մարդատեացք թշնա-  
 միք արդարութեան, և վարդապետք  
 մոլորութեան, ահա սաստեմ 'ի  
 ձեզ յանուն տեառն մերոյ Յիսու-  
 սի Քրիստոսի, մի կարիցէք մնալ 'ի  
 տեղւոջս յայսմիկ : Եւ իսկ և իսկ  
 կորեան և սպառեցան, և ջնջեցան  
 և բարձան 'ի միջոյ, իբրեւ զմոմ զի  
 ոչ կարասցէ կալ առաջի հրոյ, այն-

պէս վատնեալ սրահասեցան : Եւ տեսեալ բազմակոյտ ամբոխին դարձան առ առաքեալն մեծաւ ահիւ ըմբռնեալ, անկան առաջի սրբոյ առաքելոյն վասն մեծաց սքանչելի իրացն՝ որ գործեցան յաղբերն . և կէսքն ընթացեալ շուրջ զկողմամբքն և զտեղեաւն հռչակէին զիրացն զայնորիկ, զմեծ և զզարմանալի ըզգործն, և նշանացն հրաշափառագործնից որ կատարեցան 'ի ձեռն առաքելոյն . և գային ամենեքեան 'ի տեսիլ սքանչելեացն . քանզի բազում ժամանակս ձայնեալ էին յաղբերն, և զի այն ինչ յական քթթեղ ցամաքեալ սսլառեցաւ յորդահոսք ջրոյն :

Եւ սկսան նեղիլ 'ի ծարաւոյ բազմութիւնք քաղաքին . և առեալ վիրգս 'ի ձեռն կամէին արկանել 'ի վերայ առաքելոյն, և հարեալ քարամբքն զմիմեանս սատակէին . և յանդուգն և 'ի խուռն քարանց ձգելոց սատակեցան ոգիք իբրեւ երեսուն : Եւ մերձեցեալ սուրբ առաքեալն 'ի մեռեալսն, եղ

ձեռն և աղօթս արարեալ 'ի վերայ  
 նոցա դարձան ոգիք նոցա 'ի նոսա ,  
 և կանգնեցան կացին կենդանիք . և  
 փութացեալ իւրաքանչիւր ոք 'ի նո-  
 ցանէ բերէին զհիւանդս և զնե-  
 ղեալս յայսոց , և 'ի պէսպէս ախ-  
 տից և 'ի ցաւոց , և զանդամալոյծս  
 և զկոյրս և զկաղս և զմիակողմանիս ,  
 և զխուլս , և զհամբոս , և զլուսնոտս  
 և զամենեսեան որ նեղեալ էին 'ի  
 պէսպէս ցաւս , և բժշկեաց զամենե-  
 սեան : Յայնժամ սկսաւ քարոզել  
 նոցա զաւետարանն Մատթէոսի  
 կարգաւ , և լուեալ խնդութեամբ  
 ընդունէին զքարոզութիւնս սուրբ  
 աւետարանին : Եւ ելեալ սուրբ ա-  
 ռաքեալն յեզր քաղաքին 'ի տեղի  
 մի դաշտական յասլառաժուտ վայ-  
 րրս , եդ ծունր , եկաց յաղօթս և դո-  
 հանայր զչնորհացն Քրիստոսի , որ  
 եբաց զմիտս նոցա իմանալ և լսել ,  
 և ընդունել զբանն կենաց , և հա-  
 լատալ 'ի տէր Յիսուս Քրիստոս ,  
 որ է ճշմարիտ Աստուած և կեանք  
 յաւիտենական : Եւ արարեալ անդ  
 զնշան խաչին , և կարդաց 'ի ձայն

մեծ . և ահա շարժումն և թնդիւն  
 ահեղ որոտման , և խախտեալ զտե-  
 ղին պատառեցաւ , և բոխեալ աղ-  
 բիւր ջրոյ յորդաբուղիս քաղցրա-  
 համ վտակաց , և շուրջ բակ առեալ  
 հանդարտ և հեղ շարժմամբ ,  
 և սկսան ուրախ լինել : Եւ իջու-  
 ցեալ զնոսա 'ի ջուրն մկրտեաց , և  
 լուսաւորեաց լուսով հոգւոյն սրբ-  
 բոյ . և կատարեալ զխորհրդական  
 պատարագն՝ հաղորդեցոյց զնոսա  
 կենդանարար մարմնոյ և արեան  
 որդւոյն Աստուծոյ 'ի թողութիւն  
 մեղաց , որ է կեանք և կեցուցիչ , և  
 հաւատացուցիչ սուրբ Երրորդու-  
 թեանն : Եւ կացոյց անդ երիցունս  
 'ի սպանելոցն որ կենդանացան 'ի  
 ձեռն սուրբ առաքելոյն , և հաստա-  
 տեաց զնոսա 'ի հաւատս ճշմարտու-  
 թեան :

X Եւ գնաց 'ի կողմանս Մարաց և  
 Եղիմացւոց , և անընդունակ եղեալ  
 'ի նոցանէ՝ ոչ կարաց անդ կատա-  
 րել զօրութիւնս՝ բայց սակաւուց 'ի  
 նոցանէն՝ որոց քարոզեաց զաւե-  
 տարանն մատթէոսեան . և հաւա-



տացինն բանին, և թողին զամենայն  
 ինչս աշխարհիս, և գնացին զհետ  
 նորա յամենայն տեղիս ուր և էր  
 թայր: Եւ անտի դարձեալ եմուս 'ի  
 Բուսար քաղաք Խորին Ասորոց. և  
 եղև 'ի մտանել նորա 'ի քաղաքն՝  
 բարձեալ բերէին պատանի մի մե-  
 աեալ, որդի հազարասլետին բուս-  
 արացոց, որում անուն ճանաչիւր  
 Անդրոնիկոս, և էր ամաց երկոտա-  
 սանից. և բազում լալտիանք զհետ  
 նորա փողովք և քնարիւք, և դասք  
 դասք պարուց որ կոծելով մրմնջէին  
 և յորդահոս արտասուս հեղուին 'ի  
 վերայ պատանւոյն: Նոյնժամայն  
 ընթացեալ առաքեալն ընդ մէջ  
 հրապարակին ձգեաց զձեռն իւր՝  
 մերձեցաւ 'ի դադաղան ուր կայր  
 պատանին մեռեալ և ասէ. Պատա-  
 նի գու, քեզ ասեմ, արի կաց յա-  
 նուն տեառն մերոյ Յիսուսի Քրիս-  
 տոսի, և առժամայն կանգնեցաւ  
 մեռեալն, և որ բարձեալ տանէին  
 զտեղի առին: Եւ հայեցեալ բազ-  
 մուլթեանն ընդ երեսս սուրբ առա-  
 քելոյն, և տեսին զի հուր ցոլացաւ

'ի բերանոյ սուրբ առաքելոյն , և  
 մտանէր 'ի բերան սլատանւոյն , և  
 կենդանացաւ , և աղաղակեցին միա-  
 բան և ասեն . Աստուած ոմն երե-  
 ւեցաւ 'ի միջի մերում . և բուռն  
 հարեալ երիտասարդացն զսրբոյ ա-  
 ռաքելոյն , բարձին 'ի վերայ բազ-  
 կաց իւրեանց , և այլքն զոհս և սլա-  
 տարադս փութացուցանէին : Իսկ  
 սուրբ առաքեալն վազեաց 'ի ձեռաց  
 նոցա , և փախեաւ յամբօխէ ան-  
 տի , աղաղակեաց և ասէ . Ես ծա-  
 ռայ տեառն ամենակալի եմ և որդ-  
 ւոյ նորա Յիսուսի Քրիստոսի , և  
 Հոգւոյն սրբոյ՝ յորոյ անուն կեն-  
 դանացաւ սլատանիդ այդ մեռեալ .  
 և առաքեցայ ես առ ձեզ քարոզել  
 զաւետարանն արքայութեան , զի  
 ընկալեալ ձեր զբանն կենաց կեց-  
 ջիք և դարձջիք յընդունայն սլաշտա-  
 մանէդ ձերմէ , զոր սլաշտէքդ առ  
 տգիտութեան ձերոյ , և անհաւա-  
 տութեան , և ծանիջիք զմիայն ճշ-  
 մարիտն Աստուած զտէր մեր Յի-  
 սուս Քրիստոս . որ արար զերկինս  
 և զերկիր , զծով և զամենայն որ 'ի

նոսա : Եւ գրեաց նոցա զմատթէոս  
 սեան աւետարանն , զոր առեալ էր  
 օժանդակ 'ի քարոզութեանն : Եւ  
 մինչեւ յաւուրս երիս հազիւ լռե-  
 ցոյց զժողովուրդն 'ի չզոհելոյ իւր :  
**Յայնժամ** առեալ զպատանին մկրտ-  
 տեաց զնա 'ի լուսաւորութիւն հոգ-  
 ւոյն սրբոյ 'ի հուրն հոգեւոր և 'ի  
 մաքրութիւն ջրոյն , հանդերձ հա-  
 ղարապետաւ հարբ մանկանն , և ա-  
 մենայն ընտանեօք նորա և ազգակա-  
 նօք : Եւ կոչեաց զանունս պատան-  
 ւոյն Մատթէոս ըստ անուան սրբոյ  
 աւետարանչին , և ետ նմա ձեռնա-  
 գրութիւն յամս ութեւտան առա-  
 քելական որոշմանն :

Իսկ որ էին ելեալ 'ի քաղաքէն  
 զհետ պատանւոյն , իբրեւ տեսին  
 զսքանչելիան , և եթէ հաղարապետն  
 և ամենայն ազգն հաւատացին 'ի  
 Քրիստոս բանիւք և նշանօք սուրբ  
 առաքելոյն , եկին և նոքա կամակար  
 յօժարութեամբ , մկրտեցան 'ի հո-  
 գին սուրբ , և 'ի մահ տեառն մերոյ  
 Յիսուսի Քրիստոսի 'ի ջուրս աւա-  
 զանին : Եւ էին 'ի քաղաքին յայն-


միկ եւթն բազինք , և էին 'ի նոսա  
կուռք կուեալք և քանդակեալք 'ի  
նմանութիւն մարդոյ 'ի ձեւ Արէսի  
և 'ի չափ Արամազդայ , զոր հազա-  
րապետն ըստ հրամանի առաքելոյն  
խորտակեալ կործանեաց , և բաշ-  
խեաց անանկաց և կարօտեաց : Եւ  
բազում զօրութիւնս կատարեաց  
սուրբ առաքեալն 'ի վերայ հիւան-  
դաց և ախաացելոյ 'ի սէսսսէս ցաւս  
և 'ի չարչարանս , և դեւս բազումս  
եհան , և արար հաշածական 'ի քա-  
ղաքէն յայանի տեսողացն : Եւ ուղ-  
ղեալ անդ սեղան և եթող զմի ոմն  
անդ յաշակերտաց իւրոց քահա-  
նայանալ նոցա , և զսպասանին ըստ  
ձեռնադրութեանն զոր ընկալաւ 'ի  
լոյս հոգւոյն սրբոյ :

Եւ եղեւ իբրեւ հաստատեաց ըզ-  
նոսա 'ի հաւատս կրօնից սրբու-  
թեան , եւ գնաց յաշխարհն Գեր-  
մանիկեցւոց ըստ վիճակի ընտրու-  
թեան հոգւոյն սրբոյ . և եղեւ 'ի  
մտանել նորա անդր՝ եւ համբաւ  
զնմանէ ընդ ամենայն երկիրն ընդ-  
այն , և նշանք և արուեստք՝ որ կա-

տարէին 'ի ձեռն սուրբ առաքելոյն ,  
 իբրեւ զճառագայթս արեգական  
 սփռեալ տարածանէին ընդ ամե-  
 նայն երեսս երկրին , և փութային  
 ամենեքեան գալ առ նա , և բար-  
 ձեալ բերէին զհիւանդս 'ի պէտպէս  
 ցաւս , և զօրութիւն տեառն էր 'ի  
 բժշկել զնոսա : Եւ բազումք 'ի  
 յանցս ճանապարհացն նստէին , և  
 սպասեալ ակն ունէին նմա . որպէս  
 զի յանցանել նորա գտցեն զառող-  
 ջութիւն հարուածեալքն յախտից  
 հիւանդութեանց և 'ի տանջանայն  
 գիւահանաց : Եւ եղև իբրեւ լուաւ  
 թագաւոր նոցա զլուր անչափ սքան-  
 չելեաց նորա , խանդացաւ յոյժ , և  
 առաքեաց զճառայս իւր և հրա-  
 մայեաց գնել զնա 'ի բանդի մինչեւ  
 յաւուրս հինգ : Եւ յեա անցանե-  
 լոյ հինգ աւուրցն նստաւ յատենի  
 հանդերձ մեծամեծօք իւրովք , և  
 գլխաւոր իշխանօք Գերմանիկեցւոց ,  
 և հրամայեաց ամել զնա : Եւ իբ-  
 րեւ չոգան 'ի բանան , գային բազ-  
 մութիւն շուրջ փակեալ զտեղօքն ,  
 և լոյս սաստիկ ծագեալ արտաքոյ

596-200

Ms-00801



բանտին իբրեւ զոյս արեգական 'ի միջօրէի, և ահ կալաւ զկոչողսն որ եկեալ էին զսուրբն տանջել յատենի 'ի տեղի խոշտանդանաց: Եւ դարձան անդրէն փութանակի ահիւ և պատմեցին թագաւորին և որք ընդ նմա՝ զմեծամեծ սքանչելիսն զոր տեսին:

Յայնժամ յարուցեալ թագաւորն ցամամբ մեծաւ, և ոչք ընդ նմա նստէին մեծամեծքն, և հրաման ետուն զի հրկէզ արարեալ ըզբանդն ընդ նմին այրեսցեն զսուրբն Աստուծոյ: Իսկ նա աղօթս առնէր զամենայն աւուրսն 'ի բանդին, զի գթացեալ Աստուծոյ յարարածս իւր, և դարձցին 'ի մուրրութենէ անտի, յոր անկեալ դնէին 'ի խաւարի անգիտութեան 'ի խորս կորստեան, 'ի պատրանս սատանայական խաբեբայ մուրրութեան, զի պաշտէին զարարածս և զգործս ձեռաց իւրեանց: Եւ մինչ նոքա զայս զմտաւ ածեալ խորհէին զսրբոյն, եղև յանկարծակի ահեղ օրոտումն և ճայթումն յամպոց հրացան փայ-

շատակամբք, անկան յերկիր և յա-  
 սուշ կրթեցան միտքնոցա . և եղեն  
 իբրեւ զանխօս անասունս՝ որ ոչ գոյ  
 'ի նոսա իմաստութիւն : Իսկ սուրբ  
 առաքեալն ելեալ արտաքս 'ի բան-  
 դէն եդ ձեռն 'ի վերայ միոյ միոյ ու-  
 րուք 'ի նոցանէն, և կազդուրեցան  
 կացին 'ի վերայ ռաից իւրեանց, և  
 միտք իւրեանց դարձաւ 'ի նոսա, և  
 խնդրեցին 'ի սրբոյ առաքելոյն գտա-  
 նել ողորմութիւն, և հայցել ըզ-  
 գթութիւն 'ի տեառնէ Աստուծոյ,  
 և ընդունել զբժշկութիւն 'ի վերայ  
 հարուածոցն՝ որ հասին նոցա : Իսկ  
 սուրբն Աստուծոյ ասէ . Որոյ բաց  
 են աչք մարմնոյս, զլոյս աշխարհիս  
 միայն տեսանեն, այլ ոչ զլոյսն ճշշ  
 մարիտ՝ որ լուսաւորէ զամենայն  
 մարդ որ գալոց է յաշխարհ : Արդ  
 եթէ հաւանիք բանից իմոց և հաւա-  
 տասջիք քարոզութեան աւետարա-  
 նին փառաց միածնի որդւոյն Աս-  
 տուծոյ, զոր ես ձեզ աւետարա-  
 նեմ, ընդունիջիք զբժշկութիւն հա-  
 րուածոցդ, զոր հայցէք 'ի տեառնէ  
 'ի ձեռն իմոյ բարեխօսութեան, և

կեցցեն անձինք ձեր . և լինիջիք լուսոյն անսառերի ժառանգորդք և անանց կենացն յաւիտենից , զոր որդին Աստուծոյ Յիսուս ասցէ ձեզ , եթէ հաւատասջիք յանուն նորա աներկբայ խոստովանութեամբ : Պատասխանի ետուն և ասեն . հաւատամք յԱստուածն քո , յոր դու հաւատացեալ պատմես մեզ . միայն կեցցեն անձինք մեր , և լուսաւորեսցես զմեզ . և առաքեալն որպէս յամենայն տեղիս , և անդ քարոզեաց զաւետարանն Մատթէոսի , և ըզմարդարէութիւնն Եսայեայ տեսանողի , և զմեկնութիւն նոցա որ կայր յառական , և զճառս խորինս որ էր 'ի մարդարէութեանն , և 'ի սուրբ աւետարանի անդ : Եւ անդէն ստիպել սկսան զսուրբ առաքեալն թագաւորքն և մեծամեծքն և նախարարքն , և ասեն . Փութա կատարեա 'ի մեզ զքարոզութիւն աւետարանին աւետեաց՝ զորմէ ասացեր մկրտութեամբ հասանել թողութեան մեզաց և երկնից արքայութեանն , զի եղևցի բժշկութիւն հա



րուածոցս հասելոց 'ի վերայ մեր :  
 Արդ մի գանդաղիւր զօգուան՝ որ  
 վասն մերոյ փրկութեան՝ տալ մեզ  
 զոր ուսաք բերանով քով, և խրա-  
 սոււ արատահասիս՝ որ ժամանեաց  
 մեզ . զի գիտացաք այժմ՝ և ծանեաք  
 եթէ Աստուած քո նա է Աստուած,  
 և չիք որ բայց 'ի նմանէ, և մէք նմա  
 ծառայեսցուք և հնազանդեսցուք .  
 զի նա է Աստուած ճշմարիտ և  
 կեանք յաւիտենական և փրկիչ աշ-  
 խարհաց : Յայնժամ սուրբ առա-  
 քեալն ամ զնոսա 'ի վտակն որ իջա-  
 նէր 'ի փոքր ձորակէ միով 'ի հարա-  
 ւակողմ կուսէ, և իջուցեալ 'ի ջուրն  
 մկրտեաց զնոսա, և նոցա բացան  
 աչք և տեսին զհոգին սուրբ զի շըր-  
 ջէր 'ի վերայ ջուրցն քաղցր օդով և  
 պարզ լուսով . և լուսաւորեալ ըզ-  
 նոսա զգեցուցանէր նոցա զլոյսն իբ-  
 րեւ զհանդերձ, և իսկ և իսկ ուղ-  
 զեաց սեղան, և կերակրեաց զնոսա  
 յերկնաւոր հացէն, և յարեանէ Որդ-  
 ւոյն Աստուծոյ, և աղօթս արա-  
 րեալ եդ ձեռն 'ի վերայ նոցա, զի  
 կացցեն հաստատուն 'ի հաւատան

զոր ընկալան , և լուսաւորեցան 'ի  
 լոյս հոգւոյն սրբոյ : Եւ նոքա աղա-  
 չէին զսուրբ առաքեալն լինել առ  
 նոսա , և հովուել զնոսա զի անքակ  
 լիցին 'ի նմանէ : Իսկ նա պատաս-  
 խանեալ ասէ . Եւ այլոց քաղաքաց  
 պարտ է ինձ աւետարանել , որպէս  
 ասաց Քրիստոս , գնացէք յամե-  
 նայն հեթանոսս , միրտեցէք զնոսա  
 յանուն հօր և Որդւոյ և Հոգւոյն  
 սրբոյ : Արդ ինքն Քրիստոս յոր  
 հաւատացէք և լուսաւորեալ կնքե-  
 ցայք Հոգւով նորա , նա եղիցի ընդ  
 ձեզ . և մէք զի յանձն արար մեզ  
 զհեթանոսս՝ մի ստուենգանեսցուք  
 հրամանին նորա : Եւ ունկնդիր ե-  
 ղեալ թոյլ ետուն նմա :

Եւ գնացեալ անտի սրբոյն՝ եհաս  
 յերկիրն Պարթեւաց , և Մարաց ,  
 և Եղիմացւոց , և քարոզէր նոցա  
 զբանն կենաց : Բազումք 'ի Պար-  
 թեւացն դարձան 'ի տէր զօրու-  
 թեանց , նշանօք և արուեստիւք և  
 պէսպէս բժշկութեամբ , զոր ընկա-  
 լան 'ի սուրբ առաքելոյն , զառող-  
 ջութիւն ախտից ողորմութեամբ և

գթութեամբ տեսուն : Եւ լուսա-  
 ւորեալ անդ զբազումս , գնաց 'ի  
 կողմանս Պարսից և Մոգուց , և  
 սկսաւ քարոզել նոցա զսովորական  
 վարդապետութեանն իւրոյ զմատ-  
 թէոսեան աւետարանն , և որ ինչ  
 վասն մոգուցն հանգամանք էին եդ  
 առաջի նոցա : Եւ հասեալ մինչեւ  
 'ի տեղի սլաշտամանն կրակարանի  
 նոցա , զոր սլաշտէին օրինօք մոգու-  
 թեանն , և համբարձեալ զձեռս  
 իւր յարեւելս ընդգէմ արեգա-  
 կանն՝ զոր սլաշտէին և արգել զնա ,  
 և զզօրութիւնն ճառագայթից նո-  
 րա սակասեցոյց մինչեւ ցվեց ժամ  
 աւուրն : Եւ նշան յերկնից սիւն  
 հրոյ եկաց ընդ մէջ կրակարանին ,  
 յանդիմանել զմոլորութիւն նոցա  
 արհաւրօք և սաստիկ հիացմամբ ,  
 փոխանակ զի սպաս տանէին Հեղի-  
 ու , և Սեփայ , և Արեսի , և Պուենայ :  
 Այլ թէպէտ և այնչափ մեծ սքան-  
 ճելիք և նշանք զարմանալիք ցու-  
 ցան 'ի վերուստ , սակայն ոչ զան-  
 գիտեցոյց զնոսա դառնալ յերկր-  
 պագութենէ տարերցն . և յոր վեր-

պեալ էին սնտաի տուասալելաբանու-  
 թեամբ բարձրայօն սլարժանօք .  
 բայց միայն ոգիք ութ , զոր առեալ  
 լուսաւորեաց , և հանեալ զնոսա 'ի  
 միջոյ կործանելոցն խուժադուժ  
 ազգին :

Եւ անցեալ գնաց 'ի Գողթն գա-  
 լառ հայոց , և փութացաւ հասա-  
 նել 'ի վիճակ Թագէտաի ըստ հրա-  
 մանի հոգւոյն սրբոյ . և քարոզեալ  
 անդ զբանն կենաց , և նոքա ընկա-  
 լեալ խնդութեամբ և մեծաւ յօժա-  
 րութեամբ , հաւանեցան և հնա-  
 զանդեցան և լուսաւորեցան մկր-  
 տութեամբ աւազանին : Եթող անդ  
 նոցա երիցունս 'ի մոգուց անաի՝ որ  
 աշակերտեցան սուրբ առաքելոյն .  
 և բազում զօրութիւնս կատարէր  
 Աստուած 'ի ձեռն արանցն այնոցիկ  
 յամենայն ատիս , ուր և հասա-  
 նէին ոտք նոցա . և զբազումս գար-  
 ձուցին 'ի տէր 'ի սնտաի սլաշտամա-  
 նէն . և շնորհք առաքելականք ե-  
 ղեն 'ի վերայ նոցա : Ի քսանեւին  
 ներորդ ամի Սանատրիոյ թագաւո-  
 րին եմուտ սուրբ առաքելալն Բար-

Թողովնոս ըստ հրամանի հողւոյն  
 սրբոյ 'ի հայք, որ ընտրեաց զնոսա  
 յառաքելութիւն կոչմանն հեթա-  
 նոսաց : Եւ Թովմայի ըստ վերակա-  
 ցութեան առաջնորդութեանն իւ-  
 րոյ գրեալ առ նա, զի մի զանց ա-  
 րասցէ զնոքոք քարոզել զաւետա-  
 րանն արքայութեան, որպէս և յա-  
 մենայն տեղիս փոխանակ Թադէոսի  
 առաքելոյն՝ որ էր յեւթանասնից  
 անախի :

Եւ եկեալ սուրբ առաքեալն 'ի  
 բլուրն Արտաշու, հանգիստեցաւ այլ  
 ոմն յերկոտասանիցն Յուդայ Յա-  
 կորեան, և կանգնեցին 'ի տեղւոջն  
 ուր պատահեցան միմեանց զնշան  
 տէրուհական խաչին, և հրաժարե-  
 ցին 'ի միմեանց մեծաւ ուրախու-  
 թեամբ, և գնացեալ Յուդայի յիւր  
 տեղիսն : Բայց Բարթողովնոս գը-  
 նացեալ եմուտ 'ի հեր և 'ի Զարե-  
 ւանդ դաւառ հայոց, և արար նշանս  
 և արուեստս 'ի վերայ հիւանդաց, և  
 դեւս բազումս եհան, և լուսաւո-  
 րեալ անդ զբազումս և միսիթարեալ  
 բանիւ վարդապետութեամբ սուրբ

Կ. Կոստան Կոստան  
 Կոստան Կոստան

աւետարանին , և եղեալ նոցա վը-  
կայութիւն , զի կացցեն հաստա-  
տուն 'ի հաւատան զոր ընկալան , և  
հաւատարիմ եղեն : Եւ եղեալ միոյ  
միոյ ձեռն յանձն արար զնոսա  
շնորհացն Աստուծոյ . և ինքն գնա-  
ցեալ եկն յԱւրբիանոս քաղաք  
հայոց . և գային առ նա ամենայն  
նեղեալք որ 'ի պէսպէս ցաւս և 'ի  
տանջանս , և բժշկեաց զամենեւեան ,  
և լուսաւորեաց մկրտութեամբ  
սուրբ աւագանին :

Լուաւ զնմանէ Ոգոհի քոյր Թա-  
գաւորին Սանատրկոյ , որ էր որդի  
քեռ Աբգարու , և եկն առ նա 'ի  
Ժածուկ , և լուեալ 'ի նմանէ զբանն  
կենաց՝ հաւատաց 'ի տէր մեր Յի-  
սուս Քրիստոս ինքն և իւրքն ամե-  
նայն . և զգեցեալ հանդերձ կու-  
սութեան 'ի բաց մերկացեալ զփառս  
աշխարհի , և աշակերտեալ առաքե-  
լոյն շրջէր զհետ նորա : Եւ լուեալ  
Թագաւորին զիրան՝ որ եղեն , և զայ-  
րացեալ մեծաւ ցատմամբ իբրեւ  
զգազան կատաղեալ արիւնարբու ,  
յղեաց զհազարապետն Տերենտիոս ,

\*) միջոցաբար Աւրբանոսի  
լուսաւորեալսն ի զայն քաղաքի

և որք ընդ նմա . և իբրեւ եկն առ  
 նա հազարապետն ըստ հրամանի  
 թագաւորին , և տեսեալ զսուրբն  
 Աստուծոյ գլխացաւ 'ի նա , և նա  
 սկսաւ քարոզել նմա զաւետարանն  
 արքայութեան . և տէր եբաց զմիտս  
 նորա անսալ բանից նորա : Եւ ինքն  
 անկեալ էր յախտ բորոտութեան ,  
 և առեալ զնա սրբոյ առաքելոյն 'ի  
 գիշերի մկրտեաց . և ահա ամս լու-  
 սաւոր հովանի եղեւ 'ի վերայ տեղ-  
 ւոյն , և լոյս հրոյ շուրջ փակեալ  
 զաւազանն սրբարար : Եւ եղեւ ընդ  
 ելանել նորա 'ի ջրոյն՝ անկաւ 'ի  
 նմանէ մորթն խստացեալ իբրեւ  
 զկեղեւ ծառոյ և իբրեւ զտերեւ  
 որթոյ , և լոյս զգեցաւ իբրեւ զհան-  
 դերձ . և տեսեալ զսքանչելիսն որ  
 եղեն , բազումք հաւատացին 'ի  
 տէր : Եւ եղեւ իբրեւ եհաս լուր  
 սքանչելեացն այն առ թագաւորն ,  
 առաւել զայրացեալ անհանգուր-  
 ժելի բարկութեամբ , և փութա-  
 ցեալ յղեաց զայլ ոմն 'ի նախարա-  
 րացն , զի փութով զրաւ արասցէ  
 նոցա , և մի թուլասցին մնալ տե-

Լեւ անսալ նոցա : Եւ առեալ ըզ-  
 սուրբ առաքեալն հանդերձ հու-  
 սիւնն և հաղարապետութիւնն : և այլովք  
 աշակերտելոքն ածին յատեանն :  
 Եւ տանջեալ զսուրբ առաքեալն  
 ք.ք.ք իբրեւ ժամ մի արք վեց , և  
 համարէին զնա մեռեալ , և քարշե-  
 ցին ընկեցին զնա արտաքոյ քաղա-  
 քին . բայց սուրբ առաքեալն կայր  
 կենդանի զօրութեամբ և ուժով  
 տեառն իւրոյ յոր յուսացեալն  
 էր : Եւ իբրեւ ժամս երիս այսպէս  
 անկեալ գնէր , և շուրջ զնովաւ  
 յոյժ բազմութիւնն ՚ի քաղաքէն և  
 յամենայն սահմանաց նորա . և յետ  
 անցանելոյ երկից ժամուցն , խլըր-  
 տեաց ձեռամբն , և ձգեալ բուռն  
 հարին զնմանէն , և յարեաւ նստաւ  
 կանգուն , և համբարձեալ զձեռս  
 իւր յերկինս ասէ . Տէր Աստուած  
 հայր տեառն մերոյ Յիսուսի Քրիս-  
 տոսի , մի թողուր ՚ի ձեռանէ զվի-  
 ճակս զայս ինդրուածովք թա-  
 դէոսի և թովմայի և Յուզայի , և  
 իմ Բարթողոմէոսի , որ հոգացաք  
 վասն աշխարհիս այսորիկ . և մի



ոտնհար լիցի 'ի թշնամւոյն, այլ  
 տուր սոցա զշնորհս ողորմութեան,  
 և դարձցին յերկրպագութենէ կռո-  
 ցն սնտեաց, որ զուր և տարա-  
 պարս մոլորեալ են 'ի ազիտութե-  
 նէ անհաւատութեան: Եւ տուր  
 սոցա հովիւ և առաջնորդ, զի ծա-  
 նիցեն զքեզ միայն ճշմարիտդ Աս-  
 տուած, և զոր առաքեցեր զՅիսուս  
 Քրիստոս. և զիս ընկալ տէր իմ, և  
 զհաւատացեալքս 'ի քեզ պահեա:  
 Զայս իբրեւ ասաց շարժեցաւ ան-  
 զին, և ասա կամար լուսեղէն ե-  
 կեալ եկաց 'ի վերայ սրբոյն. և նո-  
 րա հայեցեալ 'ի վեր յերկինս ա-  
 ւանդեաց զհոգին, և բուրեաց հոտ  
 անուշութեան. և սուրբ առաքեալն  
 Թադէոս իբրեւ այն թէ մարմնաւոր  
 տեսլեամբ գայր ընդ առաջ նորա,  
 և դարձան ընդ նոյն ուստի եկն  
 սուրբն Աստուծոյ Թադէոս: Եւ  
 աս կալաւ զամենեւեան, և հաւա-  
 տացին յաւուր յայնմիկ ոգիք երկու  
 հազարք, և ամենեքեան փառաւոր  
 առնէին զԱստուած 'ի վերայ եղե-  
 լոցն, և եկաց լոյսն կամարաձեւ 'ի

վերայ մարմնոյն աւուրս երկոտա-  
սան :

Իսկ զերանելին Ոգոհի և զհա-  
զարապետն սպան սրով, և զայլս  
բազումս ընդ նոսա : Եւ տեսեալ  
զմարմին սրբոյ առաքելոյն փոխեցին  
'ի հանգիստ 'ի նմին տեղւոջ, նոյն-  
պէս և զայլոց վկայիցն 'ի փառս ա-  
մենասուրբ Երրորդութեանն : Իսկ  
իբրեւ եղեւ որոտումն լուան խուլ-  
քն և բժշկեցան, տեսին կոյրք և  
լուսաւորեցան, և համերքն խօսե-  
ցան, և ամենեքեան յիւրաքանչիւր  
ախտից բուժեցան, որք հաւատա-  
ցին 'ի տէր մեր Յիսուս Քրիստոս 'ի  
ձեռն սրբոյ առաքելոյն Բարժողո-  
մէոսի : Եւ համբարձեալ զձեռս իւ-  
րեանց միաբան հաւատացելոցն, 'ի  
մի բերան փառաւորէին զտէր մեր  
Յիսուս Քրիստոս . ընդ որում հօր  
և հոգւոյն սրբոյ վայել է փառք  
իշխանութիւն և սլասիւ . այժմ և  
միշտ և յաւիտեանս յաւիտենից .  
ամէն :

ሀበተቶሐሀሀህናቶ



ՍՐԲՈՑ ՍՈՒՔԻՍԱՍԱՆՑ



ՆԱՀԱՏԱԿՔ որք գնացին յԱԼա-  
 նաց գրանէ զհետ Սաթենկայ տիկ-  
 նոջ 'ի հայս, և վարդասպետեալք 'ի  
 սրբոց արանց աշակերտաց սրբոյ ա-  
 ռաքելոյն Թագէոսի, մենաւորեալք  
 յակունս Եփրատայ, որոց առա-  
 ջինն սուրբն Ոսկի. 'ի սոցանէ լու-  
 սաւորեալք բանիւն կենաց 'ի Քրիս-  
 տոս հաւատացին, և մկրտեալք օր-  
 ըստ օրէ յաւելուին 'ի հաւատոս.  
 և երանելեաց արանցն յազագս նո-  
 ցա վարդասպետութեանն և 'ի Քրիս-  
 տոս հաւատոցն կատարեցան յորդ-  
 ւոցն Սաթինկայ սրով: Եւ նոքա ե-  
 լեալ բնակեցան 'ի Սուկաւ լերինն,  
 որ յանուն գլխաւորին իւրեանց  
 Սուքիաս՝ կոչեցաւ Սուկաւ, 'ի Բա-  
 գրեւանդ գաւառի յանդիման Բա-

գուան գեղջ, ընդդէմ Նպատ լե-  
 րինն . խոտաճարակ լինելով իբրեւ  
 զվայրենի ոչխարս 'ի տեսչութենէն  
 Աստուծոյ, յամս Շապհոյ թագաւո-  
 րին : Եւ քանզի երկիրն Հայոց յեա-  
 ամաց աւերեալ լինէր, զի թագաւոր  
 ոչ ունէին . քանզի սպանեալ էր  
 զԱրտաւան որդի Աղարշու, և ըզ-  
 խոսրով թագաւորն Հայոց՝ թա-  
 գաւորին Պարսից, և 'ի նախանձ  
 մտեալ հայրենի վրիժուցն, այնու-  
 հետեւ կամէր կորուսանել զաշ-  
 խարհն Հայոց . ասէր . Անցեալ ա-  
 ւերեցից զերկիրն, և առից զվրէժ-  
 ըստ սովորութեան հայրենեաց : Այ-  
 նուհետեւ զօրս գուժարեալ, զաշ-  
 խարհն ջանայր վայրասպան առնել  
 և խոսպանացուցանել զգաւառան  
 Հայոց :

Իսկ երանելիքն կային և մտախորհ  
 լինէին իրացն, եթէ Զիարդ վրէժ-  
 խնդիր լինիցի թագաւորն Պարսից  
 յաշխարհէն Հայոց, և կամի նա 'ի  
 տարակուսի երկիրն Հայոց : Իսկ իբ-  
 րեւ տեսանէին զնեղութիւն և զտա-  
 ռասպանս նոցա սուրբ վկայքն, ասէ

երանելին Կողրատոս ցառւրբն Սիւ-  
 քիաս . Եկայք արասցուք աղօթս զի  
 արասցէ Աստուած խաղաղութիւն  
 աշխարհիս այսմիկ : Եւ աղօթեալ  
 նոցա ամենեցուն առ տէր ասէն .  
 Ողորմեա Աստուած ըստ մեծի ողոր-  
 մութեան քում 'ի վերայ աշխար-  
 հիս . զի թէպէտեւ անօրէնութիւն  
 է 'ի սոսա , այլ դու տէր և արարիչ  
 ամենայն արարածոց , ամենեցուն  
 օգնականութիւն և ողորմութիւն 'ի  
 քէն է . դարձո զսրտմտութեան  
 սուրն 'ի նոցանէ , մարդասէր և ան-  
 ռիսակալ և քեզ փառք յամենայնի :

Եւ նոյնժամայն դարձաւ թագա-  
 ւորն Պարսից յերկիր իւր , և եղեւ  
 խաղաղութիւն մեծ յաշխարհիս  
 Հայոց . իբրեւ տեսին երանելիքն  
 ուրախ եղեն և փառաւոր առնելին  
 զԱստուած : Իսկ 'ի նմին գիշերի տե-  
 սիլ երեւեալ երանելոյն Պաւղոք-  
 տէի , և ասէ ցեղբարսն իւր . Տե-  
 սիլ երեւեցաւ ինձ 'ի գիշերիս յայս-  
 միկ . առեւծ մի ելանէր 'ի դրանէ  
 մերմէ , և գայր հասանէր մինչեւ  
 ցմեզ , և բազում մարտիւք մարտըն-

չէր ընդ մեզ : Իբրեւ լուան զայս ե-  
 րանեւիքն , ծուեր եդեալ կային յա-  
 ղօթս և ասէին . Տէր Աստուած որ  
 գիտես զամենայն , մի զարհուրե-  
 ցուցէ զմեզ չար գաղանն , որ յար-  
 ձակեալ գայ 'ի վերայ ծառայից  
 քոց . տէր մի թողուր զմեզ յօգնա-  
 կանութենէ քումմէ , և 'ի յուսոյ ,  
 որ կարողդ ես յամենայնի . և մի  
 սար զարբութիւն քո շանց : Աս-  
 տուած որ ամենագէտդ ես , և գի-  
 տես զսիրտս որդւոց մարդկան . տէր  
 դու գիտես զի քեզ տուաք զանձինս  
 մեր 'ի ծառայութիւն , զի արժա-  
 նաւոր լիցուք անսուտ իոստմանց  
 քոց որ յաւիտենից : Զայս աղօթս  
 մատուցին փառաւորութեամբ և  
 օրհնութեամբ , հանգերձ արտա-  
 սուօք . և ասացեալ զամէնն ամենե-  
 ցուն 'ի տէր , սփռեցան 'ի տեղիս  
 իւրեանց . և ըստ սովորութեան իւ-  
 րեանց զառանձնական աղօթս մա-  
 տուցանէին տեառն :

Իսկ սուրբն Սուքիաս տեսանէ  
 տեսիլ զերրորդ ժամու աւուրն , և  
 ժողովեալ զեղբարսն , ասէ ցնոսա .



Տեսանէի ես 'ի տեսլեանն այսօր, զի  
Շապուհ վախճանեալ էր, և նստէր  
յաթոռ Դատիանոս. և առաքէր  
առ մեզ ագռաւ մի թաթաւեալ ա-  
րեամբ, և կամէր ցրուել զմեզ իբ-  
րեւ զձագս աղաւնեաց, և որպէս  
գայլ յարձակեալ 'ի փարախս գա-  
ռանց կամէր յափշտակել: Բայց  
գուք հաստատուն կացէք, և մի' եր-  
կիցեն սիրտք ձեր յերկեւղէ մարդ-  
կան, զի կարող է Աստուած օգնել  
մեզ, որպէս ամենայն յուսացելոց իւ-  
րոց: Չայս տեսեալ երանելին Սու-  
քիաս, վարդապետէր եղբարցն ըզ-  
քաջալերութիւն 'ի վերայ երկաքան-  
չիւրոցն: Եւ ասէր. Պինգ կացէք և  
հաստատուն վաստակեցէք. զի զմեզ  
զամենեսեան արժանիս արասցէ Աս-  
տուած ընդ վերջին մշակացն, որ ե-  
ղենն առաջինք. և առնումք զպար-  
գեւս վաստակոց մերոց յերկնաւոր  
տեառնէն: Չայս իբրեւ լսէին երա-  
նելի եղբարքն 'ի սրբոյն Սուքիասայ,  
եւս առաւել յաւելուին 'ի գործ  
մշակութեան իւրեանց, յոր հաս-  
տատեալք էին: Ապա երբ ուրեմն

յետուստ սուրբն Սուբիաս յիշե-  
 ցուցանէ նոցա զառաջինսն . Տեսէք  
 եղբարք իմ և զինուորակիցք . զի  
 որպէս 'ի մարտս սպատերազմաց յա-  
 ռաջադէմ էաք , նոյնպէս և յայսմ  
 մարտի , որում թագաւորի զան-  
 ձինս 'ի ծառայութիւն տուաք ,  
 սրտի մտօք ծառայեսցուք . զի և մեզ  
 տացէ վարձս ընդ յետին մշակացն ,  
 որ եղեն առաջինք : Ոմն յեղբարց  
 անտի որում անուն էր Ղուկիա-  
 նոս , ասէ ցսուրբն Սուբիաս . Որով-  
 հետեւ զանձինս 'ի ծառայութիւն  
 տուաք Աստուծոյ , եկայք ձեռնա-  
 մուխ լիցուք 'ի բազինն Բագուա-  
նայ : Պատասխանի ետ սուրբն Սու-  
 բիաս և ասէ . Եկեսցէ այլ մշակ  
 զօրագոյն քան զմեզ , նա կործա-  
 նեսցէ : Եւ կացեալ սուրբ վկայքն  
 'ի լերինն Սուկաւէտ խոտաճարակք  
 լեալք հրեշտակակրօն վարուք , և  
 մարմինք նոցա էին իբրեւ զմա-  
 մուռս քարի . և վարսք նոցա որպէս  
 զքօշից քարշէին . և ոչ ինչ ունէին ,  
 այլ յուսովն Աստուծոյ կային և  
 օրհնէին զԱստուած :

Եւ յետ ամացինչ վախճանեալ էր  
 Թագաւորն , և Թագաւորեալ Գլխ  
 գիանոս Ալանաց , և համար առնէր  
 զօրացն . տեղեկացուցանէին զԹա-  
 գաւորն վասն երանելեացն եթէ 'ի  
 զօրացդ Թագաւորաց բնակեալ են  
 յաշխարհին հայոց արք քաջք և ա-  
 ռաքինիք , որք ոչ հաւանեալ սլաշ-  
 տել զաստուածս Թագաւորաց , և  
 հալածեալք վասն որ 'ի Քրիստոս  
 հաւատոցն՝ կան 'ի լերինն Սուկա-  
 ւէտ 'ի Հայս , մեծաւ տառապանօք և  
 նեղութեամբ վասն Քրիստոսի , որ  
 յոյսն իւրեանց կոչի : Եւ իբրեւ  
 լուաւ Թագաւորն զայս ամենայն  
 յառնէն որում անուն էր Սկու-  
 հէր , ընարեաց 'ի զօրաց իւրոց արս  
 քաջս և անուանիս , և առաքեաց  
 յերկիրն հայոց հանդերձ սպառա-  
 ղինօք 'ի Սուկաւէտ լեառն , և ասէ .  
 Եթէ գտանիցէք , բազում սար-  
 գեւօք հաւանեցուցէք գալ այսր ,  
 ապա եթէ ոչ հաւանեցին գալ ,  
 'ի սուր սուսերի մաշեալիք :

Եւ եկեալ զօրուն Պարսից յեր-  
 կիրն հայոց , և հասեալ 'ի լեառն

Սուկաւէտ, ուր էր բնակութիւն  
 երանելեացն, տեսին զերանելիսն  
 և զարմացան. զի որպէս զոչխարս  
 խոտով կերակրէին, և մարմինք  
 նոցա որպէս զքար՝ որ զմա-  
 մուռ ունիցի յինքեան: Սկսաւ խո-  
 սել զօրավարն որում անունն էր  
 Բառլահա և ասէ. Զի՞նչ էք, զի  
 պատկերք ձեր իբրեւ զմարդոյ են,  
 և խոտածարակ տեսանեմ զձեզ իբ-  
 րեւ զքօշս: Պատասխանի ետ սուրբն  
 Սուքիաս և ասէ. Բնութեամբ մար-  
 դիկք եմք և յԱլանաց գրանէ, և  
 յամպարշտութենէ թագաւորացն  
 փախուցեալք և յանաստուածու-  
 թենէ, և ՚ի վերին զօրութենէն ասլ-  
 րեալք՝ այսպէս յաղագս յուսոյն  
 յաւիտենից, զոր խոստացաւ տէրն  
 մեր և Աստուած: Պատասխանի ետ  
 Բառլահա և ասէ. Տեղիքս ծմա-  
 կայինք են և ձիւն բազում ՚ի լե-  
 րինս, զիարդ կարէք բնակել ՚ի սմա  
 այդպիսի կենօք: Պատասխանի ետ  
 սուրբն Սուքիաս և ասէ. լուր ինձ  
 որդեակ և ասեմ քեզ. Որ հաւատայ  
 յԱստուած յարարիչն երկնի և եր-

կրի , ամենայն ինչ ըստ կամաց նորա  
 փոփոխի . որպէս և կամի առ իւր  
 ծառայս և փառաւորիչս անուան  
 իւրոյ : Ասէ Բառլասա . Յորմէ՞  
 տոհմէ ես : Սուրբն Սիւքիաս ասէ .  
Յերկրորդական գահէն թագակից  
 էի : Ասէ զօրավարն . Չի՞նչ անուն  
 է քո : Ասէ երանելին . Ըստ առաջ  
 նունն , Բարաքաթրայ անուանէի .  
 բայց յորժամ եկի ես 'ի գիտու  
 թիւն Աստուծոյ Սիւքիաս անուա  
 նեցայ , այսինքն թաղաղական կեանս  
 ստացայ : Ասէ զօրավարն . Պատե  
 րազմող այր երեւիս : Ասէ երանե  
 լին . Նիզակակից էի Շապհոյ ար  
 քայի : Ասէ զօրավարն . Հաւանեաց  
 և դարձիր անդրէն յառաջին պա  
 տիւն և նստցիս յերկրորդական գա  
 հին : Ասէ երանելին . Մշակ եմ  
 տեառն իմոյ , և ժամանակ է վարձս  
 առնելոյ : Ասէ զօրավարն . Յայտ է  
 տէրն քո , որում եսն : Ասէ երա  
 նելին . Այո , յայտ է տէրն իմ :  
 Ասէ զօրավարն . Չազատութիւնն  
 թողեր և 'ի մշակութիւն անկար :  
 Ասէ երանելին . Եթէ գիտէիր ըզ

տէրն իմ, և դու 'ի մշակութիւնս  
այս անկանէիր, զի առնուիր զանա-  
պական կեանսն: Եւ քամահեալ  
զքանս նորա անօրէն զօրավարն,  
բազում սպառնալեօք սաստէր 'ի  
վերայ նորա:

Իբրեւ գիտաց երանելին եթէ  
ոչինչ օգուտ է ողորջանօք խօսելն,  
ժողովեաց զեղբարսն իւր և ասէ.  
Եկայք եղբարք իմ, զի ժամանակ  
եհաս կատարման և վարձս առնլոյ:  
Իսկ երանելեացն խնդութեամբ ու-  
րախ լինէին մեծասլէս և փառաւոր  
առնէին զԱստուած, զի եհաս ժա-  
մանակ կատարման և պսակաց 'ի  
Քրիստոսէ, որում ցանկային երա-  
նելիքն: Իբրեւ ետես զօրագլուխն ժո-  
ղովեալ զնոսա 'ի մի վայր, բազում  
ողորջանօք պարգեւս խոստանայր  
տալ նոցա, եթէ հաւանեսցին՝  
դարձլիք յաշխարհն ձեր: Պատաս-  
խանի ետուն երանելիքն և ասեն.  
Պարգեւատուն մեր Աստուած է,  
որ տայ զպարգեւս անմահութեան,  
որ ազատեաց զմեզ 'ի սատանայէ և  
'ի դործոց նորա, պարգեւք քո ընդ

քեզ լիցին 'ի կորուստ , զոր խոստա-  
 նաս տալ 'ի թագաւորէն՝ գործակից  
 գործոց սատանայի , և արքանեակ  
 նորին դու և թագաւորն քո . մեք  
 պարգեւացն Քրիստոսի ակն ու-  
 նիմք , որ յոյսն է մեր : Ասէ բռնա-  
 ւորն . Ո՛ւր է պարգեւատուն ձեր :  
 Ասէն երանելիքն . Պարգեւատուն  
 մեր Աստուած է , որ արար զերկինս  
 և զերկիր , և որ 'ի նոսա արարածք  
 իցեն . նա է տէր մեր և թագաւոր  
 որ ունի իշխանութիւն կենաց և մա-  
 հու ամենայն կենդանեաց . յորմէ  
 երկինք դողան և երկիր սարսէ . որ  
 հրաման տայ ծովու , և ցամաքեցու-  
 ցանէ զնա . սաստէ գետոց և ան-  
 դրէն դառնան և ոչ եւս յաւելուն  
 'ի ծածկել զերկիր . սաստեսցէ 'ի  
 քեզ և 'ի խորհրդակիցն քո սա-  
 տանայ , և մի եղիցին կամք քո 'ի  
 վերայ ծառայիցս Աստուծոյ : Զայս  
 իբրեւ լուաւ բռնաւորն զայրանայր  
 'ի վերայ նոցա , և զմտաւ ածէր թէ  
 որով մահուամբ կորուսցէ զնոսա :

Իսկ իբրեւ գիտացին երանելիքն  
 եթէ եհաս ժամ կատարման որ 'ի

Քրիստոս , ասէն ցբռնաւորն . Ան-  
 սա մեզ , զի կացցուք յաղօթս առ-  
 տէր Աստուած մեր . և եգեալ ծուեր  
 երանելեացն կային յաղօթս և ա-  
 սէին այսպէս . Տէր Աստուած , ա-  
 րարիչ երկնի և երկրի , որ արարեր  
 զամենայն արարածս յոչնչէ , դու  
 ես Աստուած ճշմարիտ հայր տեառն  
 մերոյ Յիսուսի Քրիստոսի , որ եկն  
 և մարդացաւ , և փրկեաց զտիեզերս  
 'ի ձեռն խաչին իւրոյ և թաղման և  
 յարութեանն . և հոգիդ սուրբ որ  
 ընու զամենայն արարածս : Դու ես  
 որ ստեղծեր զմարդն առաջին և ե-  
 գիր 'ի նմա հոգի իմաստութեան  
 վայելել նմա 'ի դրախտին փափկու-  
 թեան , որպէս և կամք քո հրամայ-  
 եցին յորոց ճաշակելի էր նմա 'ի  
 անկոցն , և յորս ոչ մերձենալին պա-  
 տուիրանի քում , և կացուցեր զնա  
 տէր ամենայնի . և նախանձեալ  
 բանսարկուին ընդ պատիւ մարդոյն ,  
 պատրեալ եհան զնա 'ի դրախտէն  
 և 'ի կենացն . զոր դու ըստ քում  
 բարերարութեան շնորհեցեր մարդ-  
 կան , կորուսին զայն : Սակայն դու



մարդասէր և քաղցր, ոչ անտես ա-  
րարեր զքո ստեղծուածն, այլ ա-  
ռաքեցեր զՈրդիդ քո միածին որ-  
եկն և դարձոյց զմարդիկ 'ի կամս  
քո, և լուսաւորեաց լուսով դի-  
տութեան, որք սիրեցին զոր երե-  
ւելոյ դաւստեան Որդւոյ քո: Եւ  
արդ տէր բարերար հայեաց 'ի ծա-  
ռայքս քո որք սիրեցաք զքեզ յա-  
մենայն զօրութենէ, և հաւատացաք  
անսուտ խոստմանց քոց զոր խոս-  
տացար սիրելեաց քոց, տուր զօրու-  
թիւն յուսացելոցս 'ի քեզ, և զօ-  
րացո 'ի պատերազմիս որ վասն ա-  
նուան քո սրբոյ. և սատանայ հան-  
դերձ բռնաւորաւս յամօթ լիցին,  
և անուէն քո փառաւորեսցի 'ի ծա-  
ռայքս քո: Աստուած գթութեան  
և տէր ողորմութեան, հայեաց 'ի  
յուսացեալս և յապաւինեալս 'ի  
քեզ. մի քայքայեսցէ թշնամին ըզ-  
բանական հօտս 'ի գաւթէ քունմէ.  
ցածո՛ տէր զմրրկեալ ալիսս, որ յա-  
րուցեալ է 'ի վերայ մեր. զի ժամա-  
նեսցուք 'ի նաւահանգիստն խաղա-  
ղութեան. տուր զօրութիւն ծա-

ռայից քոց 'ի քեզ յուսացելոցս ,  
 զի յաղթեսցուք յաղթող զօրու-  
 թեամբ քով և մի լիցուք որպէս ըզ-  
 տունն զայն որ 'ի վերայ աւազոյն  
 զոր կործանեցին հողմք և անձրեւք  
 փորձութեանց . այլ հաստատուն  
 պահեա զմեզ 'ի վերայ վիմի հաս-  
 տատնոյ Քրիստոսի Աստուծոյ մե-  
 րոյ : Նայեաց տէր բարերարու-  
 թեամբդ քով 'ի յուսացեալ ծա-  
 ռայքս քո , և տուր զնշան յաղթու-  
 թեան քո ապաւինելոցս 'ի քեզ ,  
 զի զտեալք և պարզեալք լիցուք 'ի  
 պատերազմի բռնաւորիս որ նեղէ  
 զմեզ . մի խառնեացէ 'ի մեզ զո-  
 րոմն գառնութեան պատրող բա-  
 նիւք իւրովք , և ապականեացէ ըզ-  
 ցորեանն զոր յաստուածային շտե-  
 մարանսդ ժողովելոց ես . և մի բուս-  
 ցի յայգիս մեր՝ որ յանուն քո ,  
 գաղձն մնասակար , և ապականեա-  
 ցէ զողկոյզն օրհնութեան , զոր  
 ընուս 'ի հնձանան յաւիտենականս .  
 մի տար 'ի սասանութիւն զոտս մեր ,  
 այլ ամրացո աջով քով , և աներ-  
 կեւզ պահեա յերեւելի և յաներե-

ւոյթ թշնամւոյն , և տուր փառս  
 անուան քում տէր : Եւ կատա-  
 րեալ զաղօթսն և ասացեալ զա-  
 մէնն , զօրացեալք լինէին 'ի վերին  
 օգնականութենէն և 'ի տեսչութե-  
 նէն զոր ընկալան երանելիքն . և  
 դարձեալ կրկնեցին ծունր , գոհա-  
 նային և օրհնէին զԱստուած 'ի վե-  
 րայ ամենայն սարգեւացն զոր ըն-  
 կալան 'ի տեառնէ . Գոհանամք ըզ-  
 քէն տէր , որ դարձուցեր զմեզ յան-  
 աստուածութենէ 'ի ճշմարիտ աս-  
 տուած գիտութիւն , զի խաւարեալ  
 էաք և լուսաւորեցեր զմեզ լուսով  
 գիտութեան քո , զկապեալս արձա-  
 կեցեր 'ի կապանաց բանասրկուին ,  
 և զի էաք 'ի խաւարի և 'ի ստուերս  
 մահու , նշան լուսոյ քո գուշա-  
 կեաց և լուսաւորեաց զմեզ գնալ 'ի  
 ճանապարհս իրաւանց և արդա-  
 րութեանց քո տէր : Լուր տէր և  
 նայեաց յաղօթս ծառայից քոց և մի  
 տար տեղի սատանայի . այլ զօրացո  
 զմեզ զօրութեամբ սուրբ Հոգւոյդ ,  
 որ առաջնորդեցեր մեզ 'ի տեղիս  
 յայս և 'ի ժամս , զի կատարեսցուք

զընթացս մեր արդարութեամբ ,  
 շնորհօք և մարդասիրութեամբ  
 տեառն մերոյ . զի փառաւորեացի ա-  
 նուն քո տէր Աստուած մեր : Լուր  
 տէր աղօթից մերոց , որպէս լուար  
 աղօթիցն Հեղիասու , որ եղեւ 'ի  
 լերինն փախուցեալ յանօրէն Յե-  
 ղաբէլէ , որպէս և մէք փախուցեալք  
 յամպարիշտ թագաւորացն , և զեր-  
 ծեալք 'ի ցանկութեանց աշխարհիս  
 'ի լեառնս յայս , անգադար օրհ-  
 նութեամբ զքեզ միայն փառաւո-  
 րելով 'ի վերայ անպատում շնոր-  
 հաց քոց զոր ծանուցեր մեզ : Լուր  
 տէր աղօթից ծառայից քոց յուսա-  
 ցելոց 'ի քեզ , որպէս լուար աղօ-  
 թիցն Դանիէլի և Շուշանայ , փրկ-  
 կելով զԴանիէլ 'ի գբոյ առիւ-  
 ծուց , և զՇուշան 'ի դառն ծերոցն ,  
 և չարամահ սատակեցեր զվերայ  
 յարուցեալսն . և այժմ փրկեա և  
 զօրացո զմեզ 'ի սէր աստուածու-  
 թեանդ քո յաղթել թշնամւոյն որ  
 տէրդ ես և Աստուած : Լուր տէր  
 աղօթիցն մերոց որպէս լուար ձայ-  
 նի աղօթիցն Եսայեայ և Եզե-

կեայ, որք յուսացան 'ի քեզ և ար-  
տասուօք խնդրեցին զօգնականու-  
թիւն առ թշնամիսն, որ կործանե-  
ցեր զհպարտացեալսն զ'ի վերայ յա-  
րուցեալսն. և այժմ՝ զօրացո զմեզ  
յաղթել թշնամւոյն, և սլարսպեա  
աջովդ քո, զի մի ոք վարատեսցի 'ի  
մէնջ և զրկեսցի 'ի խոստացեալ բա-  
րեաց քոց տէր Աստուած մեր: Լուր  
տէր աղօթից մերոց որպէս լուար ե-  
րից մանկանցն 'ի հնոցին, որք ըզ-  
թագաւորին արհամարհեցին զբան,  
և զքո բանդ պահեցին, և օրհնեցին  
զքեզ Աստուած հարցն մերոց .  
տուր և մեզ տէր յուսացելոցս 'ի  
քեզ զօրութիւն, զի ասրեսցուք 'ի  
հրոյ փորձութեանցս որ վառեալս  
է զմեք, զի արժանի լիցուք փառա-  
ւորել զամենասուրբ զԵրրորդու-  
թիւնդ, այժմ՝ և յաւիտեանս յաւի-  
տենից . ամէն:

Իսկ բռնաւորն զարմանայր ընդ  
երանելեաց աղօթսն: Դարձեալ ա-  
սեն ցբռնաւորն. Անսա մեզ զի կաց-  
ցուք յաղթս առ տէր Աստուած մեր,  
և ասպա կատարեսցես զկամս քո. և

սկսան ասել միաբան երանելիքն .  
 Քո եմք տէր , և 'ի քեզ եմք յուսա-  
 ցեալ և առաջի քո անկանիմք . առւր  
 մեզ , տէր , կատարել զընթացս մեր  
 նեղութեամբ ըստ կամաց քոց . և  
 արժանաւորեա զմեզ մեռանել վասն  
 անուանդ քո մեծի , և առնուլ  
 վարձս ընդ այնոսիկ՝ որք հաճոյ ե-  
 ղեն քեզ և փառաւորեցաւ անուն  
 քո 'ի նոսա , և եղեն վկայք աս-  
 տուածութեանդ քո կամաւոր մա-  
 հուամբ իւրեանց . և թագաւո-  
 րեալք և պսակեալք 'ի քո փառս ,  
 վայելեացեն յանպատում և յանանց  
 կեանսդ , զոր ակն ոչ ետես և ունկն  
 ոչ լուաւ , զոր պատրաստեցեր սի-  
 րելեաց քոց : Փութամք և մեք տէր  
 ելանել 'ի մարմնոյս և խառնել 'ի  
 գունդս վկայից քոց , որք զմեզ լու-  
 սաւորեցին լուսով աստուածու-  
 թեանդ քո , և առաջնորդեցին մեզ  
 'ի վերինդ Նրուսադէմ , ուր ժողո-  
 վես զամենայն սուրբս և զսիրելիան  
 քո . զի քո է փառաւորութիւն , և  
 քեզ մատուցանեմք գոհութիւն և  
 փառս , այժմ և յանզրաւ յաւի-  
 տենին :

Եւ իբրեւ զայս ալօթս մատու-  
ցին՝ առաջի եղեն բռնաւորին և ա-  
սեն . Արդ կատարեա զհրամանս  
Թագաւորին քո և զխորհրդակցին  
ձերոյ սատանայի : Իսկ բռնաւորն  
զարմացեալ և զայրացեալ ընդ հա-  
մարձակութիւն երանելեացն՝ հրա-  
մայեաց զօրացն կապել զնոսա և  
տանջել բրօք . և հրամայեաց լապ-  
տերս բերել, և մատուցանել յոս-  
կերս նոցա, ասէ . Վիզմամբ հրոյ  
այրեցից, և կատարեցից զհրամանս  
Թագաւորին, եթէ ոչ կամիցիք  
գալ ընդ իս, և պատիւս ընդու-  
նել ՚ի Թագաւորէն : Վարժէր անօ-  
րէնն զարհուրեցուցանել զերանե-  
լիսն . առաւել եւս տեսանէր հա-  
մարձակեալս զնոսա ՚ի տանջանսն և  
առ ոչինչ համարելով, այլ օրհնելով  
զԱստուած սաղմոսէին և ասէին .  
Աստուած յօգնել մեզ նայեաց և  
տէր յընկերել մեզ փութա, և որ  
զկնի այսորիկ . Տէր ՚ի նեղութե յե-  
շեցաք զքեզ, և քո առատ ողորմու-  
թիւնդ մտիթարեացէ զմեզ : Զայս  
ասէր երանելին Սուքիաս հանդերձ

եղբարքքն , և արիաբար ընդունէին  
 զտանջանան : Բարձեալ զայրանայր  
 բռնաւորն ընդ փառաբանութիւնն  
 Աստուծոյ , և զի ոչինչ համարէին  
 զտանջանան՝ հրամայեաց գայլ ՚ի բե-  
 րաննոցա հարկանել զի մի փառա-  
 ւորեացի Աստուած ՚ի սրբոցն : Յայն-  
 ժամ սկիզբն արար սուրբն Կողբա-  
 տոս սաղմոսին . Որպէս փափաքէ  
 եղջերու յաղբերս ջուրց , այնպէս  
 փափաքեն անձինք մեր առ քեզ  
 Աստուած : Ասէ բռնաւորն . Ձի՛նչ  
 են եղջերուքն որ փափաքեն յաղ-  
 բիւրս , որում անձինք ձեր փափա-  
 քեն : Ասէ Կողբատոս . Որպէս նո-  
 քա զովացուցանեն զինքեանս ջրով  
 հարեալք յորսորդաց , նոյնպէս և  
 մեք փափաքիմք ջրոյն խաղացելոյ ՚ի  
 կեանան յաւիտենից , ապրեալք յո-  
 րոգայթից սատանայի . վասն զի ծա-  
 րաւեալք հանապազ Աստուծոյ մե-  
 րոյ հզօրի և կենդանւոյ և ճեպիմք  
 ելանել ՚ի մարմնոյս և հասանել առ  
 բաղձալին մեր Քրիստոս , որում և  
 և անձկացեալն եմք : Յայնժամ հրա-  
 մայեաց լուծանել ՚ի ջար և ՚ի դառն



տանջանացն . և խորհէր խորհրդա-  
կցաւն իւրով սատանայիւ սրով կո-  
տորել զերանելի վկայսն :

Իբրեւ գիտացին սուրբքն եթէ  
էհաս ժամ՝ ծունր եգեալ կային  
յաղօթս և ասէին . Տէր Աստուած  
զօրութեանց , որ արժանի արարեր  
կատարել զընթացս մեր անարա-  
տութեամբ 'ի փառս ամենասուրբ  
Երրորդութեանդ . լուր տէր աղօ-  
թից մերոց , և զօրացո զմեզ հոգ-  
ւովդ քով 'ի ժամ կատարմանս , և  
աներկեւղ սրահեա զմեզ 'ի պատրա-  
նաց բանսարկուին , և յահէ բռնա-  
ւորին . և շնորհեա մեզ ամենեցուն  
ճշմարիտ խոստովանութեամբ վը-  
կայել , և սրահս ընդունել և վայե-  
լել յանպատում կեանսդ : Լուր  
տէր աղօթից մերոց և գթա առ եր-  
կիրս հայոց աշխարհիս , զի դարձ-  
ցին յերկրպագութիւն և 'ի փառա-  
բանութիւն Երրորդութեանդ , զի  
քո են արարածք , և քեզ վայելէ  
երկրպագութիւն և փառք յամենայն  
արարածոց տէր Աստուած մեր :  
Լուր տէր աղօթից ծառայիցս քոց

'ի քեզ յուսացելոցս, զի ուր հեղցի  
 արիւն վկայութեան մերոյ, եղիցի  
 հող երկրին 'ի բժշկութիւն ամենայն  
 ցաւագնեւոց, և զի բլխեսցէ եր-  
 կիրն ալբեր առ 'ի բժշկութիւն  
 հիւանդաց. զի եթէ եկեսցէ ոք յա-  
 նուն մեր հանդերձ հաւատովք կամ  
 ցաւած կամ տաղնապեալ 'ի սարս-  
 ուոյ կամ դիւահար յայտոց պղծոց,  
 կամ վշտագնեալ 'ի բազում ցաւոց,  
 և աղաչեսցէն զքեզ տէր Աստուած  
 մեր, 'ի տեղւոջ զենման մերոյ, դու-  
 լուիցես և ողորմեսցիս նոցա, և  
 փրկեսցես յամենայն նեղութեանց,  
 և բժշկեսցես յամենայն վտանգից  
 հոգւոյ և մարմնոյ. զի դու կարող  
 ես յամենայնի, և քեզ փառք յա-  
 լիտեանս յաւիտենից. ամէն: Յայն-  
 ժամ ձայն եղեւ յերկնից առ նոսա  
 և ասէ. Չորս միանգամ խնդրեցէք,  
 տացի ձեզ, և եղիցի տեղի վկայութե-  
 ձերոյ ալբեր ջրոյ բժշկութեան,  
 և հող երկրին բազում ցաւոց 'ի  
 բժշկութի, և ձեզ 'ի բազում աշխա-  
 տութեանցդ հանդիստ և ուրախու-  
 թիւն. զոր կազմեցէք ձեզ բազում

Ճգնութեամբ , սիրելիք իմ , որ  
 կայ և մնայ յաւիտեան : Եւ զօրա-  
 ցեալ սուրբքն 'ի վերին զօրութե-  
 նէն՝ կնքեցին զանձինս իւրեանց , և  
 դիմեցին 'ի մահ բռնաւորին , որոց  
 սուր 'ի վերայ եգեալ կոտորեցին .  
 և նոքա ողջագուրեալք 'ի հրեշ-  
 տակաց աւանդեցին զոգիս իւրեանց  
 բարի խոստովանութեամբ 'ի հայր  
 և յՈրդի և 'ի սուրբ Հոգին , որ օր  
 եւթն և տասն էր նաւասարդի ամ-  
 սոյ : Եւ այս են անուանք երանե-  
 լեացն . սուրբն Սիւքիաս , Ղուն-  
 կիանոս , Պաւղոսէս , Կոդրատոս ,  
 Իգիքսիքիրոս , Մեմնաս , Փաւ-  
 կաս , Սերգիս , Դուեաթոս , Ագրա-  
 նիոս , Զոսիմոս , Բեկտոս , Թաղ-  
 կեսա , Յորդանէս , Անաստաս ,  
 Թէոդորոս , Յակոբոս , Թէոդո-  
 սիոս : Եւ կացին երանելիքն 'ի Սու-  
 կաւէս լերինն քառասուն և չորք  
 ամս կերակրեալք ոչ հացիւ , այլ զօ-  
 րութեամբ և շնորհօք տեառն իւ-  
 րեանց : Եւ այսպէս վկայեալ նա-  
 հատակացն և առին զպսակն յաղ-  
 թութեան 'ի Քրիստոսէ Աստուծոյ :

Եւ ապա 'ի վաղիւն չու արա-  
րեալ զօրավարին գնաց յաշխարհն  
իւրեանց , և սլատմեաց Թագաւորին  
Թէ որպէս կատարեցան սուրբքն :



0 0 4 6 0 6 4

*[Faint, illegible text at the top of the page]*

*[Faint, illegible text in the middle of the page]*

*[Faint, illegible text at the bottom of the page, including a circular stamp]*

ԲԱՆ ԵՒ ԱՍՈՒԹԻՒՆ

ՃՇՄԱՐԻՏ

ՍՐԲՈՑՆ ՈՍԿԵԱՆՑ

ՔԱՀԱՆԱՅԻՑ

ԳՏԻ միւս եւս այլ պատմագիր  
'ի կողմանս Յուդայաց, այր մի ընթեր-  
ցասէր Տատիանոս անուն որ լեալ էր  
յաւուրս Վաղենտինիանոսի 1 կայ-  
սեր. բազում ինչ պատմեացնա մեզ  
'ի յունական մատենից, որոյ գը-  
րեանն անթիւ շատաբանութեամբ  
զրոյցք և այժմ 'ի միջի մերում գտա-  
նի. զոր իմ իսկ բազում անգամ ըն-  
թերցեալ գտի 'ի ճառս նորա, եթէ  
արք ոմանք որք յաշակերտաց լեալ  
էին մեծին Թագէտոսի առաքելոյ,  
որոյ անուն գլխաւորին Խաիւսի.

այր յազգէ գոիկ 2, որք յետ մահուան առաքելոյն երթեալ կրօնաւորեցան 'ի լերինս ուրեմն ծմակայինս յակունս Եփրատայ, 'ի խառնուածս ձորոյ ուրեմն որ սկիզբն առեալ իջանեն որ կոչի Ծաղկէ, յորոյ անունն և շէնքն կոչին մինչեւ ցայսօր Ոտն Ծաղկոյ: Սոքա մատուցեալ առ արքայն Արտաշէս, ծանուցանէին նմա վասն Քրիստոսի աստուածութեանն՝ զկոչոցն յանդիմանելով զտկարութիւն. զոր իբրեւ լսէր, ոչ անտեղի զբանս նոցա առնէր, ասելով. եթէ Նուեալ է իմ վասն այդոցիկ և յայլոց բազմաց. բայց անպարասլ լեալ 'ի պատերազմէ, հրաւիրէր զնոսա լսել զնոյն բանս յայլում ժամանակի. և ինքն հեռանայր պատերազմաւ յարեւելս:

Իսկ արքն սուրբք զնոյն բանս յետ նորա խօսէին ընդ մեծի թագուհւոյն մերձ լինելով և որդւոցն 3. զոր լուեալ զայս և մերձաւորաց մեծի տիկնոջն, որք զկնի նորա ելեալ էին յԱլանաց, զոր Աստուած իսկ



Իմաստնացոյց զմիտս նոցա ընդու-  
 նել զբանն կենաց : Իսկ մի ոմն ՚ի  
 սրբոցն որ զբահանայականն էր  
 ստացեալ շնորհս, իբրեւ ետես ըզ-  
 հաւատս նոցա կատարեալ սրաիւ,  
 ՚ի մէջ գիշերի յարուցեալ կոչեաց  
 զնոսա յեզր գետոյն՝ տալով նոցա  
 զմկրտութիւն քրիստոսական լու-  
 սաւորութեան . և ՚ի կենաց գրաւ-  
 րութեան զանուանս նոցա գրե-  
 լով, արժանացուցանէր սուրբ Հոգ-  
 ւոյն : Զայս լուեալ որդւոցն Սաթին-  
 կայ, խանդացեալ ընդ իրսն մեծաւ  
 թշնամանօք զսուրբսն ՚ի գրանէն  
 հալածէին . և նոքա խնդութեամբ  
 գնացեալ նստէին յիւրաքանչիւր  
 մենարանի : Իսկ արանցն սրբոց՝ զո-  
 րոց Աստուած եբաց զմիտս նոցա  
 ընդունել զբանն կենաց, հետա-  
 զօտեալ զհետ սրբոցն, և ջերմա-  
 գոյն հաւատովք զհետ գնացեալ օր-  
 ըստ օրէ հաստատէին ՚ի հաւատսն :  
 Բայց էին արքս այսոքիկ փառաւորք  
 և հզօրք կարգեալ ՚ի վերայ դասուց,  
 և ՚ի գործ սլատերազմի առաջինք .  
 զոր իբրեւ զգացեալ որդիքն Արտա-

շէսի Անոյն և Զրոն 4 շատ աղաչեալ  
 զնոսա , զի 'ի բաց դարձցին յերկր-  
 պագութենէն Քրիստոսի . որոց ոչ  
 հաւանեալ չառնուին յանձն դառ-  
 նալ 'ի հեթանոսութիւն : Եւ իմա-  
 ցեալ այնուհետեւ զանյողդողդ հա-  
 ւատոյ նոցա հաստատութիւն , ա-  
 ռաքեալ կոչեցին զսուրբսն զայնո-  
 սիկ յիւրաքանչիւր մենարանէ , հար-  
 կեցուցանէին խօսել նոցա ընդ ա-  
 րանցն յերկուանալ նոցա յերկր-  
 պագութենէն Քրիստոսի . որոց ոչ  
 զարհուրեալ , այլ առաւել եւս  
 հաստատէին զնոսա 'ի հաւատս . և  
 ինքեանք գաղտագնաց եղեալք ան-  
 դրէն դառնային : Զոր իմացեալ  
 այնուհետեւ զանգամանդեայ միտս  
 սրբոցն , և զանհրասուրելի խոր-  
 հուրդս երկոցունց կողմանցն , խը-  
 նայեալ այնուհետեւ յարսն հաւա-  
 տացեալս , միանգամայն կասկած  
 ունելով և 'ի մօրէն : Իսկ սուրբն  
 Խաբէասի հանդերձ ընկերօքն եկն ,  
 չեւ եւս հասեալ 'ի տեղին , մինչ զի  
 ժամանել կոտորեցին զնոսա մօտ 'ի  
 խրճիթս իւրեանց , սուսերաւ բար-

ձեալ զգլուխս նոցա : Եւ յետ ա-  
 ւուրց ինչ իմացեալ զայս արանցն  
 սրբոց , միանգամայն տեսանելով  
 զերեսս ազգականին իւրեանց Սա-  
 թինկան ոչ լինել ընդ իւրեանց որ-  
 պէս յերէկն և յեռանդն . կասկա-  
 ծեալ զի մի 'ի վտանգս ինչ փորձու-  
 թեանց անկցին , համակամք միմեանց  
 լինելով , 'ի բաց անջատեցան 'ի նմա-  
 նէ . և երթեալ կրօնաւորեցան 'ի  
 լերինն որ կոչի Զրաբաշխ մերձ  
 յակն աղբեր ուրեմն յորդագու-  
 նի , յորդորեալք 'ի շնորհաց սուրբ  
 հոգւոյն , ամս քառասուն և վեց 5 :

Իսկ յետ մահուանն Սաթինկայ ,  
 այլք ոմանք եկեալք 'ի ծանօթու-  
 թիւն որդւոց նորա՝ բարեկամացան .  
 և տեղեկացեալք յաղագս արանցն  
 սրբոց՝ հարցեալ ուսան զտեղիան  
 յորս բնակեալ էին . առ որս եկեալ  
 հրապուրել զնոսա խորհէին բա-  
 նիւք . և տեսեալ զհաստատութիւնն  
 և զանխոնարհելի մտաց նոցա ըզ-  
 բարձրութիւն իբրեւ զթշնամանս  
 ինչ համարեցան . յորոց սուր 'ի  
 վերայ եղեալ կոտորեցին իբրեւ

արս հնդետասան, և բարձեալ ըն-  
կեցին 'ի վիհս՝ կարկառ քարանց 'ի  
վերայ կուտեալ: Եւ այսպէս կա-  
տարեալ սուրբքն մնացին յայնպիսի  
Թաղման մինչեւ 'ի Ժամանակս մե-  
ծին Գրիգորի. զոր խնացեալ ազգե-  
ցութեամբ սուրբ հոգւոյն եկեալ  
չինէ վկայարան 'ի վերայ նոցա. և  
առաջին վանաց երէց Թողեալ զԱ-  
բաս ոմն անուռն յիւրոց աշակեր-  
տացն:

Բայց երկուք ոմանք որք առ-  
կարագոյնք տիօք էին, ոչ բերելով  
զահ սրոյն խողխողմանն, 'ի մանկա-  
գունի սակս իւրեանց տիոցն փա-  
խուցեալ ծածկեցան 'ի խորշս լե-  
րինն. և յետ աւուրց ինչ դարձեալ  
անդրէն 'ի տեղիս զսպել ինչ ըզ-  
սուրբան, գտանէին և ոչ զոք. բայց  
զտեղի կատարմանն գտեալ՝ ծած-  
կէին հողով զնուիրական արիւնս  
նոցա, արձան քարի նշան կանգնե-  
լով 'ի վերայ իւրաքանչիւր տե-  
ղեացն: Եւ ինքեանք այնուհետեւ  
ոչ իշխեցեալք մնալ 'ի տեղւոջն,  
վարեցան յարեւմուտս կոյս 'ի հա-

րաւոյ կուսէ առ ստորոտով լե-  
 րինն . և գտեալ տեղի բարեխառն  
 մօտ 'ի դաշտաբերանն , յորում  
 բղխէին աղբէւրք ոչ սակաւք ընդ-  
 դէմ հարաւոյ . յորս իբրեւ հա-  
 սեալ նստան հանգուցեալք 'ի տեղ-  
 ւոյն բարետեսութիւնն . ուր և ար-  
 գելանոցս իւրեանց արարին գեա-  
 նափորս դարիւք՝ բնակեցան մինչեւ  
 յօր կատարման իւրեանց . զորս գը-  
 տեալ անդէորդաց 7 ոմանց առեալ  
 թաղեցին 'ի նոյն դարափորս իբ-  
 րեւ զմի ոք 'ի հիւանդաց հաշածեւոց  
 յաշխարհէ :

Բայց յետ փոքր ինչ ժամանակաց  
 և 'ի տեղին շինեալ աւան 8 մեծի  
 թագաւորին Աղաբաշու , անդ զոր-  
 գին իւր բնակեցուցանէր սակա  
 տեղւոյն բարեխառնութեանն , Աղ-  
 աբաշակերտ յանուն իւր կոչեցեալ :  
 Իսկ լեան Զրաբաշխ յանուն գըլ-  
 խաւորին նոցա Սուքիասայ՝ Սուկաւ  
 կոչեցաւ վասն յիշատակի անմոռաց  
 սրբոցն ունելով զանունն . յորոց  
 մինչեւ ցայսօր հող երկոցունց տե-  
 ղեացն 'ի բժշկութիւն ցաւոց աղօ-

x) Տե՛ս խոստ. (Իւր.  
 ևւան մեծ ի թա.  
 Գաւրիէ վաղարշապ.  
 406

Թիւք նոցա շնորհեցաւ 'ի Քրիստոս  
 սէ Յիսուսէ մերմէ . ընդ որում Հօր  
 և սուրբ Հոգւոյն փառք պատիւ և  
 զօրութիւն յաւիտեանս :



U S N V U T U V F

Faint, illegible text at the top of the page, possibly bleed-through from the reverse side.

ASAP

Faint blue markings or scribbles at the bottom of the page.



ՎԿԱՅՈՒԹԻՒՆ

ՍՐԲՈՅՆ ԱՏՈՄԱՅ

ԵՒ ՈՐԴԻՈՅ ԻԻՐՈՒՄ

ԵՒ ՎԱՐՍԱՅ, ԵՒ ՆԵՐՍԵՏԻ

ԵՒ ՎԱՐՁԱԻՈՐԻՆ



ԱՐՔ Եղբարք և հարք ժողովուրդք աստուածասէրք՝ որ Երկիւղիւն Աստուծոյ ժողովեալ էք՝ ՚ի կատարել զյիշատակ սրբոց վկայիցս. մեծաւ ցանկու թեամբ կամեցայ պատմել ձեզ զքաջութիւն արանցն. և զնահատակութիւն սրբոցն, որք վասն սիրոյն Քրիստոսի նահատակեցան, և մեզ թողին օրինակ. զի լսելով զվարս նոցա առաւել հաստատեացուք ՚ի հաւատս: Արդ շնորհեսցէ մարդասէրն Աստուած պար-

գեւս , բան՝ ինձ ասողիս և ձեզ լսողացդ մտադիւրութեամբ ունկրնդրութիւն , քահանայից և ժողովըրդոց , ծերոց և տղայոց , երիտասարդաց և կուսանաց և ամենայն չափուհասակի : Արդ մաքրեցէք զմիտս և զխորհուրդս , զգուշութեամբ լսելով զաստուածազօր մարտակցութիւնն սրբոց վկայիցն ընդդէմ թըշնամւոյն . որպէս զի և մէք հետեւեսցուք զկնի հետոց նոցա , որք հորդեցին մեզ զանսայթաք պողոտայն ՚ի վերինն Երուսաղէմ :

Ի ժամանակս Յազկերտի ամբարըշտի Պարսից թագաւորին , ծաղկէր հաւատ քրիստոնէութեան ընդ ամենայն երկիր . և տեսեալ մոգպետացն և մոգուցն խորհուրդ ՚ի մէջ առեալ վարդապետաւն իւրեանց սատանայիւ , ժողովեցան և ծանուցին թագաւորին , ասելով , եթէ Գիտութիւն լիցի տէրութեանդ քում , զի դենիմազդեղդ կործանեցաւ , և դիցախառն նախնեաց ձերոց սլաշտամունք բարձան , զի ամենեքեան ՚ի քրիստոնէութիւն

կործանեցան . և եթէ ոչ հրով և սրով և փայտիւ հրամայես կորուսանել զանուանեալ քրիստոնեայսն , մանաւանդ որ յաշխարհէն Հայոց այսր հասեալ են ազառք և հեծելազօրք , որք առաւել թշնամի են պաշտաման կրակի և մոգութեան , ոչ եւս զօրացեալ եղիցին պաշտամունք աստուածոցն : Իսկ պիղծ և անօրէն թագաւորն փութանակի հրամայեաց հրովարտակս հասուցանել ընդ ամենայն կողմանս իւրոյ տէրութեանն , եթէ Մի՛ ոք իշխեսցէ անուանել զանձն քրիստոնեայ , ապա թէ ոչ սրով և հրով և փայտիւ դատեսցի . իսկ որք կատարեն զմեր հրամանս , և մեծարեն զկրակ և զմոգութիւն՝ բարձի և պատուի և մեծի իշխանութեան արժանի գացին :

Այնուհետեւ լինէր հալածումս մեծ քրիստոնէից , զի տանջէին անհրնարին տանջանօք , և սպանանէին պէսպէս մահուամբք . այլ քաջքն պսակէին առ ոչինչ համարելով զտանջանսն և զմահ , ըստ ասելոյ

սրբոյն Պաւղոսի, եթէ Ոչ մահ և ոչ  
 նեղութիւնք ոչ կարէ մեկնել զմեզ  
 'ի սիրոյն Քրիստոսի. զի անցաւ որ  
 մահուամբս և չարչարանօքս՝ զանանց  
 և զանճառ բարիան ժառանգես-  
 ցուք: Արդ յուշ արարեալ ոմանց,  
 որ էին ճշմարտութեանն թշնամիք՝  
 անօրէն թագաւորին՝ զազատա-  
 դունդն Հայոց, որ էին սեփհական  
 ծառայք Քրիստոսի, արձակէ առ  
 նոսա դաւով նախարար զոմն, և  
 գրէ հրովարտակ այսպէս. Յազ-  
 կերակ արքայից արքայէ և յաս-  
 տուածոց հաւասարէ՝ առ սիրելի  
 ծառայս մեր առ ազատս և աւամիկ  
 հեծեալս Հայոց աշխարհիդ, որ 'ի  
 մարզիդ էք, ողջոյն հասցէ 'ի մերմէ  
 տէրութենէս: Յիշեցաք զվաստակս  
 ձեր, և զքաջութիւն որ առ թշնա-  
 միս մեր, և կամիմք մեծաւ պատուով  
 և ճոխութեամբ արձակել զձեզ  
 յաշխարհն ձեր. զի տեսեալ եզ-  
 բարց ձերոց առաւել փութասցին  
 'ի մեզ և 'ի մեր ծառայութիւն.   
 միայն զի փութով հասանիցէք 'ի  
 դուռն արքունի:

Արդ իբրեւ ընթերցան նոքա ըզ-  
հրաման թագաւորին և լուան ըզ-  
բանս նախարարին , այնուհետեւ  
գիտացին զգաղտաձիգ նեոս թըշ-  
նամւոյն , որ հանապազ մարանչի  
ընդ ծառայս Աստուծոյ . յուղի ան-  
գեալ գնացին , և հասեալ 'ի կիցս  
ճանապարհին որ զատանէր յաշ-  
խարհն հայոց , խորհուրդ աս-  
տուածային շնորհացն 'ի տեսչու-  
թենէ վերին զօրութեանն 'ի մէջ  
անկանէր : Եւ ժողովեալ տէր Ա-  
տոմ գնունի իւրովք ազատօքն , և  
տէր Մանաճիհր ուշաունի իւրովք  
ազատօք , խորհուրդ կալան առ մի-  
մեանս , և սկսան ասել այսպէս . Մեք  
գիտեմք զպիղծ և զանօրէն թագա-  
ւորն , զի վասն այնորիկ կոչէ զմեզ զի  
հնազանդեցուսցէ իւր խաւարային  
խորհրդոցն , և արասցէ զմեզ խա-  
ւար փոխանակ լուսոյ . և զանցաւոր  
պատիւս խոստանալով 'ի յաւիտե-  
նական բարութեանցն զմեզ վրիպե-  
ցուսցէ , զոր խոստացաւ անսուտն  
Աստուած իւրոց ծառայից 'ի ձեռն  
սրբոց իւրոց մարգարէից . որք քա-

ջութեամբ նահատակեցան 'ի ժա-  
 մանակս իւրեանց վասն անուան նո-  
 րա , և բարի անուան յաշխարհի թո-  
 ղին և գանձս բարութեան յերկինս  
 համբարեցին , արժանաւոր գուլով  
 լուսաւոր սլսակացն . զի թեպէտ և  
 մեք անարժան եմք , սակայն 'ի նա  
 ապաւինելով՝ արժանաւորք գտա-  
 նիցիմք , զի միայն զյօժարութիւն  
 կամացն խնդրէ Աստուած : Եւ միա-  
 բանեալք ամենեքեան ընտրեցին մե-  
 ռանել վասն անուան տեառն մերոյ  
 Յիսուսի Քրիստոսի , քան առ ժա-  
 մանակ մի վայելել 'ի մեղս . ոչ զար-  
 հուրեալք յառժամանակեայ մա-  
 հուանէս ըստ ձայնի սրբոյ աւետա-  
 րանին՝ որ ասէ , թէ Մի՛ երկնցիք  
 յայնցանէ որ զմարմինն սպանա-  
 նեն , և զոգին ոչ կարեն սպանա-  
 նել : Այնուհետեւ յանձն արա-  
 րեալ զինքեանս սրբոյ Երրորդու-  
 թեանն , գէմ եդեալ գնացին յաշ-  
 խարհն հայոց :

Իսկ ապա համբաւն հասեալ 'ի  
 դուռն անօրէն թագաւորին , ար-  
 ձակէր գունդ բազում զկնի նոցա ,

և հրաման տայր զամենեւեան սրով  
 սպանանել : Իսկ սրբոց երանելեացն  
 հասեալ այնուհետեւ յաշխարհն  
 հայոց , յերկիրն Անձեւացեաց , և  
 գտեալ 'ի վայելուչ տեղի մի լե-  
 րանցն հրեշտակակրօն միանձնական  
 զոմն 'ի քարանձաւի միոջ բնակեալ  
 պէսպէս և բազում ճգանց համ-  
 բերեալ . առ սա հասեալք ամենե-  
 քեան առ հասարակ ծուներ կըրկ-  
 նեալ բարերարին Աստուծոյ , և  
 փառաւորէին զԱստուած . և օր-  
 հնեալք 'ի նմանէն պատմեցին զանցս  
 աղէտիցն , և զնեղութիւնս իւրեանց  
 ճանապարհին : Իսկ հոգւոյն սրբոյ  
 ազգեալ նմա , ասէ . Երանելիք էք  
 դուք արք քրիստոսասէրք . զի վաղ-  
 վաղակի տեսանելոց էք առ որ անձ-  
 կացեալն էք , զի զօգտակարն ձեր  
 հոգասցէ տէր Յիսուս Քրիստոս :  
 Եւ ընկալեալ զօրհնութիս 'ի նմանէ  
 իջին բնակեցան մօտ առ նա մեծաւ  
 ուրախութեամբ որպէս զբանակս  
 հրեշտակաց սաղմոսելով և օրհնե-  
 լով զԱստուած : Եւ 'ի մէջ գիշե-  
 րին տեսիլ սքանչելի երեւեալ սրբ-

բոյն Ատոմայ , լոյս կամարածեւ  
 փայլեալ 'ի վերայ ամենեցուն , և  
 այր մի լուսաւոր զգեստիւք և ահա-  
 ւոր տեսլեամբ բաշխէր սլաակս բո-  
 լորեալս 'ի կարմիր վարդէ . և ասէ  
 ցսուրբն Ատոմ , Քաջալերեցարուք  
 զինուորք Քրիստոսի : Իսկ նորա  
 զարհուրեալ 'ի տեսլենէն՝ զարթու-  
 ցեալ , բազում պաղատանս և աղօթս  
 մատուցանէր հանդերձ արտասուօք  
 առ բարերարն Աստուած այսպէս  
 ասելով . Տէր դու գիտես զսրտից  
 մերոց զխորհուրդս , զի վասն ա-  
 նուան քում սրբոյ մատնեցաք զան-  
 ձինս մեր 'ի մահ , անարգելով զհրա-  
 մանս պիղծ և անօրէն թագաւորին ,  
 որ բանիւք սնտաիւք հրապուրէ ըզ-  
 մեզ . զի եղիցուք հրաժարեալք յան-  
 սպառ քոց բարեաց , և վայելել  
 'ի մառախլապատ և 'ի մոխրասլաշտ  
 վայելչութիւնս նոցա : Արդ տէր  
 բարերար , մի բացէ առնէր 'ի մէնջ  
 զօգնականութեանդ քո վերակա-  
 ցութիւն , զի մի ոտնհար լիցի թըշ-  
 նամին , թէ յաղթեսցէ քոց ծա-  
 ւայից . զի թէպէտ և անարժան եմք ,



այլ դու տէր սովոր ես ցուցանել  
 զողորմութիւնս քո 'ի վերայ մեղա-  
 ւորաց . քանզի ոչ եկիր կոչել զար-  
 դարս , այլ զմեղաւորս 'ի կենդա-  
 նատուր բղսումն արեան քո : Եւ  
 այսպէս կացեալ նոցա յաղօթս մին-  
 չեւ ցժամ առաւօտին , ապա յա-  
 րուցեալ ամենեքեան 'ի պաշտօն ա-  
 ռաւօտուն կատարեցին զսովորական  
 աղօթսն : Եւ սկսեալ սուրբն Աստու-  
 պատմել նոցա զտեսիլ գիշերոյն .  
 իսկ նոցա առ հասարակ արտա-  
 սուալից հառաչանօք ծուներ կըրկ-  
 նեալ բարերարին Աստուծոյ , որ  
 պէս 'ի միօջէ բերանոյ աղաղակէին  
 և ասէին . Տէր մեր և Աստուած Յի-  
 սուս Քրիստոս , եթէ արժանի հա-  
 մարիս զմեզ մեռանել վասն ա-  
 նուանդ քո սրբոյ , մեք պատրաստ  
 եմք յամենայն ժամ որպէս զոչխար  
 'ի սպանումն , զի կատարեսցուք նշա-  
 նաւ սուրբ խաչի քո , և մի պարտեա-  
 ցուք յանաստուածիցն , 'ի մոխրա-  
 պաշտ թագաւորէն , և 'ի զօրաց նո-  
 րա . զի ամօթալից կորիցեն ամենայն  
 թշնամիք ճշմարտութեանն :

Իսկ դիւապաշտ և սեւագունդ  
 զօրքն Պարսկաց զգիշերն ամենայն  
 հետամուտ եղեալ հասանէին 'ի  
 լեառն, և կալեալ զոմն հարցանէին .  
 Թէ Ո՞ւր իցեն բնակեալ : Իսկ նորա  
 զարհուրեալ յանցաւոր մահուա  
 նէս, հանգոյն լեալ Յուդայի մատ  
 նըջի՝ պատմէր նոցա զտեղւոյն : Եւ  
 նոքա բազում ամբօխիւ վաղվաղա  
 կի հասանէին ուր էին սուրբքն :  
 Իսկ քաջ նահատակացն տեսեալ  
 զյարձակումն անօրինացն ըստ սովո  
 ղական իւրեանց արիութեանն, մի  
 մեանց ձայն տուեալ ասելով, Ձի  
 կալէք . վասն որոյ և անուն տեղ  
 ւոյն Ձիակալի վանք կոչեցեալ մին  
 չեւ ցայսօր ժամանակի : Իսկ ա  
 րանցն քրիստոսասիրաց հեծեալք  
 յիւրաքանչիւր երիւարս, ժողո  
 վեալք 'ի բլուրն կարգեցին ռազմն :  
 Իսկ նախախնամութիւնն Աստուծոյ  
 յայտնեալ սիրելեացն իւրոց, տեսիլ  
 գիշերոյն յայտնապէս երեւեալ ա  
 մենեցուն անանց լոյսն և անթառամ  
 պսակքն . և նոյն ժամայն 'ի բաց  
 թողեալ զերիւարսն, և ընկեցեալ

+) Եւս. յախաւ Եւսիաբաբե .

զղէնսն ցնծութեամբ յառաջ մա-  
տուցեալ'ի կատարումն : Իսկ սուրբն  
Ատոմ՝ զսքանչելատեսիլ զորդեակն  
իւր առաջի արարեալ'ի ժամ կա-  
տարմանն՝ զանգիտեալ'ի մանկական  
տիոցն . իսկ նորա յօժարութեամբ  
յառաջեալ քան զամենեսեան՝ բա-  
րի խոստովանութեամբ 'ի Քրիստոս  
կատարէր և պսակէր . և սուրբն Ա-  
տոմ՝ հանդերձ սուրբ ընկերօքն իւ-  
րովք սաղմոսէին և ասէին . Սիրե-  
ցաք զքեզ տէր , զի լուսիցես ձայնի ա-  
ղօթից մերոց . ընկալ զկամաւոր պա-  
տարագս և խառնեա զամենեսեան  
'ի դունդս սրբոց քոց : Եւ ամենայն  
իսկ գնդին արժանի եղեալ կատա-  
րեցան սրով բարի խոստովանու-  
թեամբ 'ի Քրիստոս , աւանդեցին  
զհոգիս իւրեանց 'ի նոյն տեղւոջ . և  
սուրբ և վարդապոյն արիւնն զերկիր  
ոռողանէր :

Իսկ շնորհալից Պարսիկ մի 'ի նոյն  
գնդէ արժանի եղեւ նոյն տեսլեան ,  
և զաղաղակ բարձեալ , թէ եւ ես  
քրիստոնեայ եմ , որ առժամայն  
կատարեցաւ մկրտեալ յիւր արիւնն ,

և թուեցաւ 'ի դուռնդս սրբոցն 'ի  
 տեսչութենէն Աստուծոյ : Իսկ մի  
 ոմն թշուառացեալ 'ի գնդէն Հայոց  
 փախստեայ անկանի առ հովիւ մի ,  
 և առեալ զհովուական մախաղն ,  
 կերպարանեալ զինքն ձեւով հո-  
 վուին , փոխանակեալ զուսեղէն  
 պատմութեանն և զմշտնջենաւոր  
 կեանսն ընդ զաղրատեսիլ զգես-  
 տուն և ընդ առօրեայ կենացս . և  
 Պարսիկն յօժարութեամբ գիմեալ  
 'ի տեղի կատարմանն , ընկալեալ  
 յինքն զվճիռ մարտիրոսութեանն  
 յուղարկեալ փոխանակ նորա ընդ  
 սուրբ գնդին յերկնաւոր հարսա-  
 նիսն . և նա որպէս ոմն որ վարա-  
 տեցաւ երբեմն 'ի սրբոց Քառաս-  
 նից գիմելով 'ի բաղանիսն , և զտեղի  
 կոչման նորա վիճակի ելից բաղա-  
 նեսպանն . քանզի թոյլք և երկմիտքն  
 յամենայն ժամ կորնչին :

Ապա յետ երկուց աւուրց տեսիլ  
 երեւեալ 'ի գիշերին սրբոյ Ճգնաւո-  
 ըին , զի յամենեցունց վերայ լոյս  
 փայլեալ ծագէր հրաշալի և սքան-  
 չելի . որ մեծաւ զարմացմամբ 'ի վա-

ղիւն փութով աղղ արարեալ եպիս-  
 կոսոսին և քահանայից, աղատաց և  
 ամենայն ժողովրդոց, որք փութով  
 անդր հասանէին. և ՚ի սուրբ կտաւս  
 զնշխարս սրբոցն ամփոփեալ մա-  
 տուցին ՚ի տեղի հանդստեանն իւ-  
 րեանց՝ լապտերօք լուցելովք և բուր-  
 մամբ խնկոց, սաղմոսիւք, և երգօք  
 հոգեւորօք հանդերձ հսկմամբ. և  
 տօնախմբեալ զյիշատակս նոցա մե-  
 ծաւ ուրախութեամբ ՚ի նաւասարդի  
 ամսոյ ինն :

Արդ որք յայսմ տեղւոջ հանդի-  
 պեալք կատարեցան են այսոքիկ .  
 գլխաւորն սուրբ Ատոմ որդւոյն  
 իւրով յազգէն Գնունեաց, սուրբն  
 Վարս յՈստան տանէ, սուրբն Ներ-  
 սէ՛՛՛ յԱրուանթունի տանէ, սուրբն  
 Վարձաւոր և այլ եւս բաղմութիւն  
 սուրբ ընկերացն որք նահատակե-  
 ցան ընդ նոսա, և առին զսպակա  
 անապականս, որոց անուանքն գը-  
 րեալ են ՚ի դպրութիւն կենացն  
 յաւիտենից :

Եւ սուրբն Մանաճի՛հր ուշտունի  
 իւր սուրբ ընկերօքն յառաջեալ ՚ի

սահմանս իւրն աշխարհին՝ կատա-  
 րեցան 'ի տեղւոջն որ կոչի Ոչխարաց  
 վանք . որ և ամփոփեալ զնշխարս  
 սրբոցն, ոսկերք նոցա ծածկեալ կան  
 յեկեղեցոջն որ 'ի բլրին : Այսպէս  
 նահատակեալք արի և քաջ նահա-  
 տակացն յամս Յաղկերտի ամբարշտի  
 Պարսից թագաւորի . որք արհա-  
 մարհեցին զկեանս իւրեանց վասն  
 անուան տեառն մերոյ Յիսուսի  
 Քրիստոսի . և զամբարտաւան թա-  
 գաւորն հանդերձ խորհրդակցաւն  
 իւրով սատանայիւ յամօթ արարին .  
 զօրացեալք յԱստուած Հայր մեր ,  
 և 'ի տէր մեր Յիսուս Քրիստոս , և  
 'ի սուրբ Հոգին . որում փառք յա-  
 շխտեանս . ամէն :



ԴԱԻԻԹ ԴՈՒՆԵՅԻ

Faint, illegible text, possibly bleed-through from the reverse side of the page. The text is mirrored and difficult to decipher.





# ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹԻՒՆ

## ՍՐԲՈՅՆ ԴԱԻԹԻ

ՈՐ Ի ԴՈՒՒՆ ԿԱՏԱՐԵՑԱԻ



ԱՍՏԱՆՕՐ սկիզբն արասցուք  
կարճառօտ բանիւք յարմարել փոքր  
'ի շատէ զնահատակութիւն երջան  
կին Դաւթի, նա և զայն թէ ուստի  
էր, և որպէս եկեալ յաշխարհս  
հայոց, և թէ որպիսի վարուք ե  
ղեալ 'ի կենցաղումս. և յետ այսոցիկ  
հասեալ 'ի գլուխ ասպարիսին յաղ  
թող պարծանաց խաչին Քրիստոսի.  
արդ բաղձալի սրտիւ և շնորհօք  
հոգւոյն սրբոյ պատմեսցուք:

Էր այրս այս աղգաւ 'ի տաճիկ  
տոհմէ Սուրհանն անունն կոչեցեալ,  
հռչակաւոր 'ի մեծաց նախնեաց  
հայրենեաց: Իսկ ապա 'ի ժամա

նակա իշխանութեանն մեծին Համա-  
 զասպայ որդւոյ Դաւթի կուրապա-  
 ղատի, երանելի նահատակն Քրիս-  
 տոսի ընդ զորս Տաճկաց յերկիրս  
 հայոց հասեալ լինէր յԱյրարատ  
 գաւառ 'ի կողմ Կոտէից նահան-  
 գին. և շրջէր ընդ գեւղս և ընդ ա-  
 ւանս և տեսանէր զկարգս քրիստո-  
 նէից և զպարկեշտ վարս աստուած-  
 պաշտութեան: Խորհուրդ գեղե-  
 ցիկ զմտաւ ածէր վերնական ձրիւքն  
 Հոգւոյն սրբոյ ազգամամբ՝ միշտ 'ի  
 սրտի իւրում կայր 'ի տուէ և 'ի գի-  
 շերի 'ի ճշմարիտ հաւատս որ 'ի  
 Քրիստոս: Հրաժարէր այնուհետեւ  
 յիւրայոցն ամենայնէ, զի զՔրիստոս  
 շահեսցի, զի փրկեսցի նովաւ, զի  
 ազատեսցի 'ի ծառայութենէ ապա-  
 կանութեան նորոգմամբ վերստին  
 ծննդեամբն որ 'ի հայր և յՈրդի  
 և 'ի Հոգին սուրբ. և ցանկայր լու-  
 սաւորութեան աւազանին, հեղ-  
 ձուցանել զաներեւոյթ Փարաւոն 'ի  
 ջուրն մկրտութեան աւազանին, և  
 հայցէր մաղթանօք 'ի կոչումն ըն-  
 ծայութեանն և ոչ եւս յամենալ 'ի

Ծառայութեանն : Եւ եղև այս 'ի  
 Ժամանակս Անաստասայ Հայոց կա-  
 թողիկոսի և յիշխանութեան մեծա-  
 նուն Գրիգորի Մամիկոնեանի Հայոց  
 պատրկի :

Եւ քանզի յոյժ ցանկալի էր  
 Սուրհան և բազմաց մեծարոյ , ա-  
 ռեալ Գրիգորի իշխանին Հայոց մա-  
 տուցանէր առ կաթողիկոսն Անաս-  
 տաս զՍուրհան զի մկրտեսցէ : Իսկ  
 նա մեծաւ ցանկութեամբ և բեր-  
 կրալից ուրախութեամբ մկրտեաց  
 զնա սրբութեամբ աւազանին յա-  
 նուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբ-  
 բոյ , որում յեղանակէր Գրիգոր  
 պատրիկ զիւր հայրենի անուն Գա-  
 լիթ կոչելով 'ի ձեռն հայրապետին  
 և մաքրութեան աւազանին . և վաղ-  
 վաղակի օթեվան լինէր ամենասուրբ  
 Երրորդութեանն , որպէս խոստա-  
 ցաւ Քրիստոս եթէ ես և Հայր իմ  
 եկեսցուք և օթեվանս առ նմա ա-  
 րասցուք . և առաքեալ ասէ . Չիք  
 խաիր ոչ Հրէի , ոչ հեթանոսի , ոչ  
 ծառայի և ոչ ազատի . և թէ՛ Որք  
 'ի Քրիստոս մկրտեսցարուք , զՔրիս-

տոս զգեցեալ էք . և Եսայի ասէ .  
 Կոչեսցի անուն նոր զոր տէր ա-  
 նուանեսցէ : Եւ ընու եւթնաբուլիս  
 շնորհօք հոգւոյն սրբոյ , և բառնայ  
 անուն ծառայութեան , և համբար-  
 ձեալ հրաժարէ 'ի լեռնէն Սինայէ  
 որ է հագար՝ որ ծառայէ որդւովք  
 իւրովք հանդերձ , և վերագասէ  
 զինքն յորդիս ազատին 'ի վերինն Ե-  
 բրուսաղէմ , որ է մայր մեր ամենե-  
 ցուն , և ոչ իամայէլեան , այլ իսահա-  
 կեան որդւոյն ազատի . և վերագոչէ  
 ըստ Պաւղոսի . Չեմ որդի ազատնոյն ,  
 այլ ազատին , որով Քրիստոս ազա-  
 տեաց զիս 'ի ծառայութենէ ապա-  
 կանութեան յազատութիւն փա-  
 ռաց Որդւոյն Աստուծոյ : Եւ 'ի  
 սոյն հաստատեալ բնակէ յաշխար-  
 հիս հայոց 'ի դաշտակողման 'ի գեւղ  
 մի՝ որում Չագ անուն կոչէր : Եւ  
 յեա սակաւ ժամանակի ստացաւ  
 իւր կին և որդիս մաքրապէս վարուք ,  
 պարկեշտ և պատուական ամուս-  
 նութեամբ ըստ առաքելոյ խրատու .  
 և կացեալ զամենայն ժամանակս  
 իւր 'ի բարութեան , և հասեալ 'ի

ծերութիւն , և յապահովացեալ  
ընդ ամրածածուկ աջուլն Քրիստոսի ,  
յօրէնս տեառն խորհէր 'ի տուէ  
և 'ի գիշերի :

Եւ հասեալ 'ի Ժամանակս Սա-  
հակայ Հայոց կաթողիկոսի և Սմբա-  
տայ բագրատունւոյ Հայոց իշխա-  
նի , յորում Տաճիկք տիրեալ ու-  
նէին զաշխարհս Հայոց , և առաջ-  
նորդ զօրուն որ 'ի Հայս Աբղլայ  
անուն դառն և չարաբարոյ , որ  
միշտ հեղմամբ արեամբ անմեղաց  
զուարճանայր յաղգմանէ չարին :  
Յայնմ Ժամանակի ըմբռնեալ լի-  
նէր երանելին Բաւիթ 'ի ձեռն  
անօրինին Աբղլի , զի չէր իսկ պարտ  
թաքչել ճշմարտութեանն : Խան-  
գացեալ ընդ հաւատան որ 'ի Քրիս-  
տոս խորհրդակցութեամբ բանասար-  
կուին վարանէր առատանայր և զայ-  
րանայր կրճտելով զատամունան •  
Խնդրէր պատճառ խոնարհեցուցա-  
նել զարդարն յորոգայթ իւր • և  
բազում և սկսակէս հնարս հնարէր  
ողորանօք և խոստմամբք պարգե-  
ւաց . և դարձեալ սպառնալեօք

վասն տանջանաց և մահու մարտ ե-  
 դեալ կուռէր 'ի բաց կալ 'ի Քրիս-  
 տոսէ և դառնալ յառաջինսն , որ  
 խոստանան գիտել զԱստուած ,  
 բայց ոչ ծանուցեալք զՃշմարիտն  
 Աստուած : Իսկ երանելին հաստա-  
 տեալ կայր 'ի հաւատս սուրբ Եր-  
 րորդութեանն անշարժ խորհրդով  
 և աներկեւղ պատասխանատուութեամբք . և ոչ հաւանէր կիսակրօն  
 կարգացն զոր 'ի նախնոյն . . . . .  
 . . . . . ընկալեալ զոր . . . . .  
 մեծ կոչեն , որ իբրեւ զմի ոք յայն-  
 ցանէ համարեալ է որ յառաջն մո-  
 լարքն էին որպէս Թեւդասն և Յու-  
 դաս գալիլեացի : Իսկ բռնաւորն  
 զարմանայր ընդ համարձակութիւն  
 ծառային Քրիստոսի . և հրամայէր  
 կապել և դնել 'ի բանդ զերիս ա-  
 ւուրս , խոշտանգեալ պէսպէս կրա-  
 տանօք և հարուածովք , և քարշե-  
 լով փետտել զհերսն և զՏորուսն առ  
 'ի հրապուրել զնա 'ի գէն մոլորութեան  
 իւրեանց : Իսկ նա ոչ առ-  
 նոյր յանձն , այլ համբերէր քաջութեամբ  
 յուսով անապական կենացն

և անզորաւ ուրախութեանցն և ան-  
թառամ պսակացն որ 'ի Քրիստոս  
Յիսուս :

Ապա յերրորդ աւուրն ընդ այդն  
ընդ առաւօտն հրամայէր ածել զե-  
րանելին առաջի իւր , և բացեալ  
զբերանն մահաշունչ ասէր . Յանձն  
առ զհրամանս մեր և ուրացիր ըզ-  
Քրիստոս : Իսկ նա գեղեցիկ խոր-  
հուրդս հաստատուն յանձին ե-  
դեալ ըստ արժանի հասակին , ըստ  
ծերութեան մեծութեանն , ըստ ե-  
րեւելի վայելչութեանն , ըստ զուար-  
թածաղիկ ալեացն զուարճացելոց ,  
ըստ գեղեցիկ 'ի մանկութենէ մին-  
չեւ յաւագութիւն սննդեանն , ա-  
մենայն կարգօք լի ըստ երջանկին  
Եղիազարու , այսին արարեալ արհա-  
մարհէր զսպառնալիսն և կշտամ-  
բեալ յանդիմանէր զամբարիշտն  
իւրեանց բարբառովն : Իսկ չարին  
խորհրդականն հրամայէր զսուրբ  
նշանն ընկենուլ յերկիր , և ստիպէր  
կռփանօք զի կոխեսցէ զյաղթու-  
թիւն սարժանացն և զառհաւատ-  
չեայ կենացն զսուրբ խաչն . իսկ

նա ոչ առնոյր յանձն : Եւ ասէ նա  
 քունաւորն . Չեմ ինչ լսելոց կո-  
 րրստական քում հրամանացդ . զոր  
 ինչ կամիս՝ արա վաղվաղակի : Եւ սա  
 բարկացեալ առ զսուրն զի անդէն  
 ՚ի ներքս ՚ի սենեկին սպանցէ զերա-  
 նելին . իսկ հարձն ճիչ բարձեալ  
 յափշտակեաց զսուրն ՚ի ձեռանէ  
 նորա և ասէ . Ընդէր ՚ի ներքս ՚ի  
 սենեկիս սպանանես . եթէ պար-  
 տապան ինչ մահու իցէ , արտաքս  
 ելեալ մեռցի : Եւ ոչ ըստ կամաց  
 չարին լինէր , այլ ըստ Աստուծոյ .  
 զի ամենեցուն յայտնի լիցի վկայու-  
 թիւն երանելոյն վասն Քրիստոսի :

Ապա յետ այնորիկ առաջի ե-  
 դեալ զկեանս բունաւորն եթէ հա-  
 ւանեացի , ապա թէ ոչ՝ զմահ վայտի :  
 Իսկ նա յանձն առ մեռանել վասն  
 Քրիստոսի քան զկեանս խղճիւ . ան-  
 երկեւղ համարձակութեամբ կայր  
 ըստ գրեցելումն , թէ Ի բաց կաց  
 յանիրաւէ անտի , և դողումն ՚ի  
 քեզ ոչ մերձեացի . և թէ , Արդարն  
 ՚ի մահուանէ ոչ երկիցէ , մանաւանդ  
 ըստ աւետարանին Քրիստոսի թէ ,



Մի երկնչիք յայնցանէ որ սպանա-  
 նեն զմարմին և զոգին ոչ կարեն  
 սպանանել . վասն այնորիկ ընտրեաց  
 մեռանել վասն Քրիստոսի : Եւ ա-  
 պա ածեալ լինէր երանելին 'ի տե-  
 ղի քաջութեան յասպարէզ կա-  
 տարմանն : Եւ կացեալ յաղօթս  
 գոհանայր 'ի վերայ անպատում  
 ընտրեացն որ տուան նմա 'ի Քրիս-  
 տոսէ արժանի լինել մեռանել վասն  
 անուան նորա . և դիմեալ կամաւ 'ի  
 փայտն՝ տարածեաց զինքն 'ի վերայ ,  
 և փայտն կանգնեցաւ ընդ հարաւ :  
 Եւ առեալ սպանողին զգեղարդն  
 բերէր 'ի կողմն ահ արկանելով ,  
 թերեւս հաւանեցի . իսկ սուրբն  
 Դաւիթ ըստ աւաղակին նմանեալ  
 գոչէր առ Քրիստոս հառաչմամբ  
 սրտիւ ասելով . Յիշեա զիս տէր յոր  
 ժամ դաս արքայութեամբ քով :

Իսկ ժողովք բազմութեանն որ  
 շուրջ կային , ոմանք քաջութեան  
 քարբառս աւետարանէին նմա , և  
 ոմանք սլարսութեան : Կայր մօտ  
 առ փայտին կին նորա , քաջալերէր  
 զնա և յորդորէր բանիւք բազմօք

անշարժ կալ 'ի հաւատոս որ 'ի Քրիստոս : Իսկ երանելին Դաւիթ հաստատուն հաւատով ցանկայր ելանել 'ի մարմնոյն և մտանել առ Աստուած : Եւ անդէն եհար զգեղարդն 'ի սիրտն , և ընդ բղխեալ արեանն աւանդեաց զհոգին 'ի փառս Աստուծոյ , ըստ գրեցելումն եթէ հոգիք արդարոց 'ի ձեռին Աստուծոյ : Եւ փայան զի էր ընդ հարաւ , յարեւելս դառնայր . այս հրաշայլն նշան ցուցաւ հաւատացելոց և անհաւատից , զի յայտնի լիցի զօրութիւնն Քրիստոսի և պարտութիւն թշնամւոյն . աստանօր ուրախութիւն հրեշտակաց , զի զօրացան աշակողմանքն և յամօթ եղեն ձախակողմանքն : Այսպէս սուրբն Դաւիթ վկայեաց վասն Քրիստոսի , արհամարհելով զմահ . կանգնել ալ յերկրի զնշան անուան իւրոյ , և յերկինս զանապական զփառս և զթագ արքայութեանն ընդ ամենայն սուրբս 'ի Քրիստոսէ ընկալաւ :

Եւ յետ այնորիկ փութով 'ի տեղին հասանէին Սարգսակ ամատու-

նեաց եպիսկոպոսն քահանայիւք և  
 ուխտիւ եկեղեցւոյ, և Մուշեղ մա-  
 միկոնեան սպարապետն հայոց և  
 Արտաւազդ նորին եղբայր բազում  
 ազատօք • և իջուցեալ 'ի փայտէն  
 տարան 'ի սուրբն Գրիգոր զնշխարս  
 երանելոյն Դաւթի վկային Քրիս-  
 տոսի : Եւ բերեալ պատուական  
 հանդերձս պատեցին զսուրբն հան-  
 դերձիւ իւրով զգեստուն, և կազ-  
 մեցին խնկօք և իւղովք և տարան 'ի  
 գերեզման հանդերձ սաղմոսիւք և  
 օրհնութեամբք և երգօք հոգեւորօք  
 և պայծառ լուցմամբք և եգին 'ի  
 յարկս սրբոյն Յիզաբուզաի • և ըզ-  
 փայտ սրբոյ վկային յօրինեալ խաչ  
 կանգնեցին 'ի վերայ գերեզմանին :  
 Իսկ զգեղարգնն օրով խոցեցաւ,  
 ընդ քսան դահեկանի յինքն հայ-  
 ցեաց Մուշեղ սպարապետն որդի  
 մամիկոնեանի և մարդպետի, զի խաչ  
 ձեւացուցեալ պատուեսցի յիշա-  
 տակ ազգաց յազգս տոհմի իւրոյ 'ի  
 փառս Աստուծոյ :

Եւ կատարեցաւ սուրբ վկայն  
 Քրիստոսի Դաւիթ որ օր քսան և

երեք էր արեգ ամսոյ յաւուր երկ-  
 շաբաթու 'ի վեցերորդ ժամու, ճըշ  
 մարիտ խոստովանութեամբ 'ի Քրիս-  
 տոս Յիսուս տէր մեր . յորոյ ձեռն  
 բարեխօսութեան ոչ սակաւ լինին  
 բժշկութիւնք **Հաւատացելոց** 'ի  
 փառս և 'ի գովութիւնս **Հօր և Արդւոյ**  
 և **Հոգւոյն սրբոյ . այժմ և միշտ և**  
**յաւիտեանս :**



## ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ

1. Մի օր . Յոսփինիանոսի :
2. Մի օր . Գուէհիկի :
3. Մի օր . Երդայն :
4. Մի օր . Վնայն և Վրդայն :
5. Մի օր . Ժամանակն և շնորհ :
6. Մի օր . անդ որսորդաց :
7. Մի օր . Տէժ 'ի Լագանորէն :
8. Մի օր . Ղրաբանդի :



Handwritten text at the top of the page, possibly a title or header.

# Handwritten title or header in a non-Latin script.

1	Handwritten text	10
2	Handwritten text	15
3	Handwritten text	20
4	Handwritten text	25
5	Handwritten text	30
6	Handwritten text	35
7	Handwritten text	40
8	Handwritten text	45

Handwritten text in the middle of the page.

Handwritten text at the bottom of the page.

# Յ Ա Ն Կ

ԺԹ . ՀԱՏՈՐՈՅ

Վկայութիւն սրբոյ Առաքելոյն Բարդողիմէոսի . . . . .	5
Վկայաբանութիւն սրբոց Սու- քիասանց . . . . .	33
Բան և ասութիւն ճշմարիտ սրբոցն Ոսկեանց քահա- նայից . . . . .	59
Վկայութիւն սրբոյն Աստուծայ և որդւոյ իւրում, և Վար- սայ, և Ներսէհի և Վարձա- ւորին . . . . .	69
Վկայաբանութիւն սրբոյն Դաւ- թի որ 'ի Դուին կատարե- ցաւ . . . . .	85











SDu



